

UuLi
760

ՓԵՒՍՏՈՍ ԲՈՒՋԸՆԻ

Ե. Մ.



ՎԻԵՆՆԱ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1890

Մակ
760

ՓԱԻՍԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ

1931

1999

ՓԵՒՍՏՈՍ ԲՈՒՋԵՆԴ

Ե. Մ.

Ա. ԿԱՂԵՄԻԿՈՍ
ՀԱՎՈՐ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՎԻՆՆՆԱ

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1890

Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մինչև ներկայ դարուս առաջին քառորդը, այսինքն մինչև Մէն - Մարտէնը հռչակաւոր „Mémoires sur l'Arménie“ երկասիրութեան լոյս տեսնելը, Փաւստոս Բուզանդացին շատ քիչ է գրաւել մեր մատենագիրների ուշադրութիւնը: Փաւստոսի անօրինակ անկեղծութիւնը, որ տեղ տեղ անցնում է պատշաճի սահմանից, դեռ հինգերորդ դարում տեղիք էր տւել շատերին նրան անպատկառ հեղինակների շարքում դասելու: Բանը այնտեղ հասաւ, որ նրա պատմութեան շարունակողը Ղազար Փարպեցին իր գործի յառաջաքանում յանձն առաւ պաշտպանել իր նախորդին անիրաւացի մեղադրութիւնների դէմ: Կարող էր միթէ Բիւզանդիայի պէս քաղաքում ուսում առած մի մարդ այնպիսի անվայել քաներ գրել իր պատմութեան մէջ, հարցնում է ճարտասան պատմիչը եւ ինքն էլ պատասխանում է. “Բնւ լիցի. ինձ թուում է, թէ մի տղէտ եւ յանդուզն յոյն կամ ասորի աղաւաղել է Փաւստոսի երկասիրութեան քննազիրը կամ նրա անւան տակ կամեցել է ծածկել իր սեպհական յանդգնութեան արտադրութիւնը,,: Հասկանալի է որ Ղազարի այսօրինակ պաշտպանութիւնը կարող էր ցրել Փաւստոսի անձնաւորութեան մասին տարածւած աննպաստ կարծիքները, քայց հազիւ թէ նա կարողանար փոխել



760

h. s. 755

մեր մատենագիրներն վերաբերութիւնը դէպի այն պատմութիւնը, որ իր վրայ կրում էր Բուզանդի անունը: Ընդհակառակը, նրա աշխատութեան շատ տեղերը զանազան գրչակների վայրախօսութիւն համարելով, նրանք այնուհետեւ ասելի անպատահաբար պիտի նայէին այդ գործի վրայ: Եւ իրաւի, կարողալով մեր միջնադարեան պատմիչներին, մենք նկատում ենք՝ որ Փաւստոսի երկասիրութիւնը նրանց համար ծառայել է միայն որպէս երկրորդական աղբիւր: Այն սակաւաթիւ վկայութիւնները, որ քաղում են նրանք Բուզանդարանից, մեծ մասամբ այն տեսակ իրողութիւններ են, որոնք ուղղակի չեն հակառակ Մովսէս Խորենացու պատմութեանը: Առհասարակ քերթողահօր հեղինակութիւնը անհամեմատ ասելի քարձր է եղել հին հայոց գրականական աշխարհում: Անգամ այնպիսի պատմական անցքեր, որոնց Փաւստոս անտարակոյս ժամանակակից կամ նոյն իսկ ականատես է եղել, մեր պատմիչները արձանագրել են ասելի հետեւելով Խորենացուն՝ քան Փաւստոսին: Միակ մատենագիրը, որ գերադասել է վերջինին, Մեսրոպ երէցն է, որի պատմութիւնը համարեաւ ամբողջապէս ծաղկաբաղ է արած Փաւստոսի երկասիրութիւնից կամ այդ երկասիրութեան վրայ հիմնւած ուրիշ աղբիւրներից, որ նա «Արեւելից գիրք», է անւանում: Բայց այս քացառութիւնը դժար չէ մեկնել: Իր գործին նիւթ առնելով գրեխաւորապէս մեծն Ներսէսի վարքը եւ Մամիկոնեան տան պատմութիւնը չորրորդ դարում, Մեսրոպ քրնականաբար պիտի դիմէր այն աղբիւրին, որ ամենից ասելի մանրամասնութիւններ է բովանդակում իր ընտրած ընտրանի մասին: Իսկ այդ պահանջը կարող էր լրացնել միայն Բուզանդի պատմութիւնը: Կասկած չը կայ որ իր աղբիւրը որոշելու միջոցին Մեսրոպ ի նկատի է ունեցել եւ Մամի-

կոնեան իշխանի կարծիքը, որին նա ներում է իր աշխատութիւնը եւ որի համար սիրելի պիտի լինէր մանաւանդ Փաւստոսի երկասիրութիւնը, ինչպէս նախնեաց փառքի եւ մեծութեան լաւագոյն ապացոյց: Չէ կարելի ասել որ քացի Մեսրոպից, մեր միւս պատմիչները անտես արած լինէին Փաւստոսի պատմութիւնը: Արդէն այն հանգամանքը՝ որ Փաւստոս ասանդում է շատ այնպիսի տեղեկութիւններ, որ ի զուր կը լինէր որոնել Խորենացու երրորդ գրքի մէջ, — պիտի դրդէր նրանց փոքր ի շատ օգտւելու եւ Բուզանդարանից: Համարեա մեր բոլոր նշանաւոր պատմիչները հէնց այդպէս էլ վարել են: Յովհաննէս կաթողիկոս, Մովսէս Կաղանկատուացի, Ռւխտանէս Եղեցացի, Թովմա Արծրունի . . . սրանք ամենքը ձեռքի տակ են ունեցել Փաւստոսի պատմութիւնը, թէ եւ օգտւել են նրանից մեծ զգուշութեամբ: Սակայն ուշադրութեան արժանի է այն իրողութիւնը՝ որ այդ մատենագիրները մեծ մասամբ խորշում են Փաւստոսի անունը յիշելուց, իսկ նրանցից երկուսը՝ Ասողիկն ու Գանձակեցին, դիտմամբ Ղազար Փարպեցուց յետոյ են նշանակում նրան: Ի՞նչ է այս բնահամակրութեան պատճառը: Միակողմանի կը լինէր մեր տեսակէտը, եթէ այդ քացատրէինք միայն Փարպեցու անտեղի ապաքանութեան (Apolo-gie) ազդեցութիւնով: Կային եւ ուրիշ պատճառներ, որոնց մասին լսել են մեր պատմիչները: Մեզանում, ինչպէս եւ ամեն տեղ, որեւէ երկասիրութեան տարածման համար մեծ նշանակութիւն են ունեցել, քացի գրքի ներքին արժանատրութիւններից, — եւ հեղինակութեան սկզբնապատճառը եւ հեղինակի անձնատրութիւնը եւ նրա երկասիրութեան լեզուն: Եթէ Ագաթանգեղոսին սիրով էին կարդում, դրա պատճառը ոչ միայն նրա գրքի բովանդակութիւնն էր, որ ի հարկէ պիտի հետաքրք-

քրէր ամեն մի հայի, այլ եւ այն՝ որ հեղինակը Տրդատի քարտուղարն էր եւ թագաւորի հրամանով գրեց իր պատմութիւնը, այլ եւ այն վերամբարձ ոճը, որով նա զարդարել էր հայոց մեծահրաշ դարձի պատմութիւնը: Մի եւ նոյնը պէտք է ասել եւ միր ոսկեղարի մատենագիրների նկատմամբ. թէ որքան յարգում էին նրանց, այդ երևում է նրանց ընծայած մականուններից՝ Սքանչելի (Կորիւն), Անյաղթ (Դաւիթ), փիլիսոփայ եւ քերթողահայր (Մովսէս), ճարտասան (Ղազար) . . . : Եւ այդ յարգանքի պատճառը անշուշտ մասամբ այն էր՝ որ դրանք բոլորը մեծն Սահակի եւ Մեսրոպի աշակերտներն էին համարւած, յայտնի էին որպէս Ս. Գրքի թարգմանիչներ եւ եկեղեցական մատենագիրներ, շատերը դրանցից օրինակելի էին իրանց ոճով եւ վայելել էին ժամանակակից իշխանների եւ ականաւոր հոգեւորականների հովանաւորութիւնը: Եւ այդ Սուրբ Թարգմանիչների գործերին մեր միջնադարեան մատենագիրները բաջ ծանօթ էին: Բոլորովին հակառակ դրութեան մէջ էին գտնուում նրանք Փաւստոս Բուզանդացու վերաբերութեամբ: Ո՞վ էր Փաւստոս, ո՞ւմ խնդիրով է նա գրել իր պատմութիւնը, այս մասին մեր պատմիչներից գուցէ հնագոյնները միայն տեղեկութիւն ունէին: Միւսներին այն էր միայն յայտնի՝ որ նա « յունաց ժամանակագիր, էր, — մի իրողութիւն, որ չէր կարող սիրալիր ընդունելութիւն խոստանալ մեր պատմիչին: Մեր մատենագիրներին չէր կարող դուր գալ եւ Փաւստոսի ճապաղ լեզուն, որ ստէպ ստորանում է մինչեւ ուսմկական պարգախօսութիւնը եւ հետեւաբար շատ հեռու է կլասիկական հայկարանութիւնից: Եթէ այս ամենի վրայ աւելացնենք եւ այն իրողութիւնը՝ որ մեր պատմիչը թշնամաբար է վերաբերում դէպի Ներսէսի յաջորդները,

վկայելով որ նրանք եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունք չ'ունէին եւ միայն թագաւորների սեղանն էին օրհնում, — այն ժամանակ մեզ համար բոլորովին կը պարզի խնդիրը: Եւ իրաւի, օտարոտի կը լինէր սպասել՝ որ Փաւստոսից նշանաւոր քաղաքներ անէին այնպիսի պատմիչներ, որպիսիք են՝ օրինակ, Յովհաննէս կաթողիկոսը եւ Ստեփանոս Օրբելեան, որոնք հայոց կաթողիկոսներին Ներսէսից սկսած «ինքնագլուխ պատրիարք», են անւանում: Այս են, մեր կարծիքով, Փաւստոսի վատանուն հրոշակի զխաւոր պատճառները: Սակայն զարմանալի է՝ որ ակներև հակակրօթիւն ցոյց տալուց յետոյ էլ, մեր հին մատենագիրներից ոչ ոք երես առ երես չէ դատաւարտել Փաւստոսին: Առաջին անգամ մեր պատմիչի դէմ՝ ձայն քարձրացրեց Վենետրկի միթարեան միաբանութիւնը՝ ի դէմս Գ. Միքայէլ վարդապետ Չամչեանի: Ծերունի գիտնականը, որ համարեա կոյր հաւատ ունի դէպի Խորենացու անմահ վաստակը, հերքելով հերքում է Փաւստոսի աւանդած բոլոր այն տեղեկութիւնները, որոնք չեն համաձայնում քերթողահօր վկայութիւններին: Փաւստոսին հռչակելով հայոց ազգի եւ եկեղեցու թշնամի, նա ծգնում է սուեր ձգել եւ նրա անձնաւորութեան վրայ եւ ներկայացնել նրան մի քաղղախնդիր, փառամոլ եւ խոռվարար հոգեւորական: Բայց Գ. Չամչեանի այս հայեացքը Փաւստոսի վրայ՝ բարեբախտաբար այժմ արդէն հնացած կարելի է համարել: Ինչպէս ասացինք, առաջին անկողմնապահ կարծիքը Փաւստոսի մասին պատկանում է Փրանսիացի հայագէտ Սէն-Մարտէսին: Հակառակ արմատացած կարծիքին, Սէն-Մարտէն ուղղակի յայտնում է՝ որ Բուզանդի պատմութիւնը աւելի ճիշտ գաղափար է տալիս չորրորդ դարու Հայաստանի վիճակին մասին, քան Խորեն-

նացու չոր ու ցամաք երրորդ զիրքը: Նոյն զետնականք Լըրոսի „ Histoire du Bas-Empire “ աշխատութեան նոր հրատարակութեան մէջ մոյցներով Փաւստոսից քաղած քազմանթիւ վկայութիւններ, նորից դարձնում է հայազէտների ուշադրութիւնը Բուզանդարանի վրայ: Կամաց կամաց մեր քանասէրներն էլ սկսում են աւելի խելացի վերաբերել դէպի Փաւստոս: Ետնորոշ գայրոյթը տեղի է տալիս հանգիստ ուսումնասիրութեան: Յիսնական թուականներին Վիեննայի միթարեան վարդապետներից՝ Յ. Յ. Գաթրըմեան իր “ Տիեզերական արատնութեան, ” երկրորդ հատորում՝ քաւական օգտում է թէ՛ Սէն-Մարտէնի ցուցմունքներից եւ թէ՛ Փաւստոսի երկասիրութիւնից: Վիկտոր Լանգլուայի խմբագրութեամբ հրատարակած „ Collection “ ում՝ վաթմնական թուականներին լոյս է տեսնում Փաւստոսի պատմութիւնը Ֆրանսերէն թարգմանութեամբ, գործ մեր յարգելի քանասէր Մ. Էմիլի: 1879 թւին գերմանացի հայազէտ Մ. Լաուէր տպագրում է Բուզանդի երկը գերմաներէն թարգմանութեամբ: Բացի այս թարգմանութիւնների յառաջարկներից, Փաւստոսին ներած են մի քանի էջեր զանազան հայ եւ եւրոպական հրատարակութիւնների մէջ, որպիսիք են՝ Quadro della Storia letteraria di Armenia (1829), Wiener Jahrbücher der Literatur (1833), Versuch einer Geschichte der armenischen Literatur (1836), Պատմութիւն Հայերեն Գրքութեանց¹, Բազմաշէպ (1865), Journal des Savants (1869), Библиографическiй очеркъ армянскоiй историческоiй литературы (1879), Բննասիր (1887), Հանդիս Ամսօրեայ (1889) եւ այլն: Բայց

¹ Հայկական հին դարձութեան պատմութիւն (Կ - ԺԳ դար) քարճրագոյն դպրոցաց համար: Երկրորդ տպագրութիւն, յաւելումներով եւ փոփոխութեամբ: Վիեննայի, Միթարեան տպարան, 1886:

չը նայելով մեր պատմիչին վերաբերեալ յօդածների այս ոչ այնքան ճշին քանակութեանը, պէտք է խոստովանել որ Փաւստոսի պատմութիւնը էլի քիչ է ուսումնասիրւած: Մինչ Ազաթանգեղ, Խորենացին եւ Փարպեցին վերջին տարիներս ընդարձակ քննական հետազոտութիւնների առարկայ դարձան, Փաւստոս, որ Խորենացուց յետոյ նշանաւորագոյնն է մեր հնագոյն պատմիչներից, այդ տեսակ քննադատութեան դեռ չենթարկեցաւ: Նոյն իսկ Բուզանդին վերաբերեալ տարրական խնդիրները, թէ ո՞վ էր նա, ի՞նչ լեզուով պատմագրեց, եւ ամբողջ է հասել արդեօք մեզ նրա երկասիրութիւնը, թէ ոչ. — այդ խնդիրներն անգամ, ասում ենք, կարօտ են դեռ վերջնական լուծման: Այս այսպէս լինելով, կարծում ենք, ոչ որ աւելորդ չի համարիլ Բուզանդի մասին մի նոր գրւածի երեւան գալը: Մի քանի տարի սրանից առաջ՝ դեռ եւս “ աշակերտ հեղգ առ ուսումն եւ փոյթ առ ի վարդապետել, ” մենք մի փոքրիկ յօդւած հրատարակեցինք “ Արձագանք, ” շարաթաթերթի էջերում, “ Երկու Խօսք Փաւստոս Բուզանդացու մասին, ” վերնագրով: Այդ յօդւածում յայտնւած մեր կարծիքներին մենք հաւատարիմ ենք մնացել մինչեւ օրս: Բայց այդ ժամանակներից մեզ աջողել է աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել Փաւստոսի երկասիրութիւնը եւ անա մեր եռամեայ աշխատութեան պտուղը: Մենք գիտենք որ այնպիսի մի ծանր գործ, որպիսին է առաջիկայ խնդիրների հետազոտութիւնը, շատ աւելի լուրջ նախապատրաստութիւն է պահանջում, քան որ ունինք մենք: Բայց մի կողմից մտածելով որ գոնէ միջոց տւած կը լինինք աւելի ձեռնհաս անձինքների օգուտ քաղելու մեր հաւաքած նիւթերից, միւս կողմից կամենալով լուծումն գտնել մեր անձնական տարակուսանքներին, — մենք վտոսհացանք

առաջարկել ներկայ փորձը մեր քանասերների ուշադրութեանը:

Յօդածիս մէջ յիշած աղբիւրներից մի քանիսը մեր ձեռք հասան այն ժամանակ, երբ մեր փորձը մտանում էր իր վախճանին: Ուստի ձեռագրիս տպագրութեան միջոցին մենք աւելացրինք մի քանի նոր նկատողութիւններ: Այսպէս, օրինակ, երրորդ եւ չորրորդ գլուխների մէջ մենք ստիպւած եղանք ներհիւսել պ. Եորայր Բիւզանդացու եւ Տ. Յ. Գաթրթեանի կարծիքների քննադատութիւնը: Մի եւ նոյն ժամանակ մենք ուրախութեամբ նկատեցինք որ մեր ննթադրութիւններից մի քանիսը հաստատւում են յիշեալ քանասերների հետազօտութիւններով:


Եոր սկսող հեղինակները սովորութիւն ունին առաջաքաններում աղաչել սպազայ քննադատների ներողամտութիւնը: Մեզ էլ յայտնի է որ մեր փորձը զերծ չէ նոյն իսկ խոշոր պակասութիւններից, բայց սպասում ենք միայն իխար եւ անաչառ քննադատութեան:

Վրենսկ, 17 Սեպտեմբեր, 1889:

Ե. Մ.

Վ Ր Ի Գ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Տող	
10	24	Մարկիւլեոսս
31	3	Իբրեւ ամենայնիւ նայր
		Ուրե՛ր: Մարկիւլեոսս
		„ ամենայնիւ Իբրեւ գայր:



ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԻ

I.

Ո՛Վ ԷՐ ՓԱԽՍՏՈՍ

Փաւստոսի կեանքի մասին մենք համարեա ոչինչ տեղեկութիւն չունինք: Չը նայելով որ նրա երկասիրութիւնը քաջ ծանօթ է եղել թէ՛ հինգերորդ եւ թէ՛ հետագայ դարերի մեր մատենագիրներին, այնու ամենայնիւ ոչ զք նրանցից չէ հաղորդում գէթ համառօտ տեղեկութիւն մեր պատմիչ կեանքի մասին: Անգամ Ղազար Փարպեցին որ ապրել է Փաւստոսից մի դար միայն ուշ եւ շարունակել է նրա պատմութիւնը, բաւականանում է ասելով որ Բիւզանդացին Բիւզանդիայում է ուսում առել: Բայց այս վկայութիւնն էլ կարելի է անհիմն համարել, որովհետեւ նոյն Ղազարը անւանելով մեր պատմագրին « Փոստոս »¹, անգիտակցաբար խոստովանում է որ չգիտէ անգամ Բուզանդի ո՛վ լինելը: Եթէ Փարպեցին այսպէս, էլ ի՞նչ պէտք է սպասել մեր Բագրատունեաց եւ Ռուբինեանց պատմիչներից, որոնցից շատերը Փաւստոսի անունն անգամ չեն յիշում: Ժամանակակիցներիս համար անցայտ է ոչ միայն Բուզանդի կենսագրութիւնը, այլ մութն է նոյն իսկ նրա ծագման խնդիրը: Ի՞նչ ազգից էր Փաւստոս: Այս հարցի մասին գիտնականների կարծիքները զանազան են: Ոմանք Բուզանդին յոյն են համարում, այլք հայ: Առաջին կարծիքի պաշտպանները մէջ են բերում հետեւեալ փաստերը: Փաւստոսի երրորդ դպրութեան վերջին գլխից յետոյ կարգում ենք. « Կատարեցաւ

երրորդ դարը, քսան եւ մի պատմութեանց դպրութիւնք, ժամանակագիր Փաւստոսայ Բուզանդոսայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր յունաց ։ Այստեղ պատմիչը յունաց ժամանակագիր է կոչուում, ուրեմն նա յոյն է եղել, եղրակացնում են մի քանի բանասէրներ։ Փաւստոսի օտար ծագման մի ուրիշ ապացոյցն էլ այն է սրանց կարծիքով, որ պատմագիրը երբէք չէ անւանում հայոց երկիրը՝ «աշխարհն մեր», կամ հայոց թագաւորին՝ «թագաւորն մեր»։ Ոմանք այս փաստերի վրայ աւելացնում են եւ այն՝ իբր թէ Փաւստոս ատելութիւն է ցոյց տալիս դէպ ի հայոց ազգը։ Նա, օրինակ, ասում է, որ հայերը անկեղծօրէն չէին ընդունել քրիստոնէութիւնը, որ հայոց հայրապետները Ներսէսի մահից յետոյ եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքից զրկեցան, եւ այլն։ Արքայպէս, ինքը պատմիչը վեցերորդ դպրութեան ցանկի վերջում ասելով. «Մտորոտ ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք, տունք տան համարական թուօք», նոյն դպրութեան հինգերորդ եւ վեցերորդ գլխերում խօսում է ոմն Փաւստոս եպիսկոպոսի եւ նրա եղբայր Առոստոմի մասին, որ «էին լեալ ազգաւ Հռոմ»։ Ոմանք կարծում են որ այս Փաւստոսը ինքը Բուզանդացի պատմագիրն է։ Սակայն այստեղ բնականաբար ծագում է երկու հարց։ Նախ, եթէ պատմիչը խոստանում է իր մասին տեղեկութիւն տալ «ի ստորոտ ամենայն պատմութեանց», ինչպէս պնդում են Բուզանդին յոյն համարող գիտնականները, — ինչո՞ւ պատմութեան վերջին դեռ չը հասած, հինգերորդ եւ վեցերորդ գլուխների մէջ է կատարում նա իր խոստումը։ Երկրորդ, խոստանալով տասը գլխի մէջ բովանդակել այդ տեղեկութիւնը, ինչո՞ւ նա միայն երկու գլխում է խօսում իր մասին։ Գիտնական պ. Մ. Էմինը անտարակոյս լռիկապէս է դատում, պնդելով որ այն տասը գլուխները, որոնց մէջ պատմիչը իր մասին է ճառել, պակաս են մեղ հասած Փաւստոսի գրչագիրներում, հետեւապէս հինգերորդ գլխի մէջ յիշած Փաւստոսի եւ Բուզանդացի պատմագրի միջեւ ոչինչ կապակցութիւն չը կայ։ Սակայն,

ինչպէս յետոյ կը տեսնենք, խնդիրն ինքն ըստ ինքեան պարզ է եւ այս տարակուսանքների պատճառը այն թիւր մեկնութիւնն է, որ մեր գիտնականները տուել են Փաւստոսի վերոբերեալ հատուածին։ Բուզանդին հայ համարողները միայն մի նշանաւոր փաստ են բերում իրանց կարծիքին ի հաստատութիւն։ Այդ այն է, որ պատմագիրը մի տեղ Սահառունեաց իշխանին յիշում է այսպէս. «Եւ զմերոյ տոհմի աղբի իշխանն Սահառունեաց»։ Պատմիչը այստեղ Սահառունեաց տոհմը իրն է համարում, ուրեմն նա այդ հայ իշխանական տանից էր ծագում, եղրակացնում են Նէյսանն եւ Ղաուէր։ Սէն-Մարտէնը պատմիչի այդ վկայութիւնից հետեւեցնում է, որ Փաւստոս Սահառունեաց եպիսկոպոս է եղել։ Մի քանի ուրիշ գիտնականներ կարծում են որ Փաւստոսը յոյն լինելով հանդերձ, աղբական է եղել Սահառունեաց, կամ թէ յիշեալ հատուածում «զմերոյ տոհմի» բառերի տեղ պէտք է կարգաւ որեւէ յատուկ անուն։ Մի խօսքով այստեղ բացում է ենթագրութիւնների անեղանելի լաբելրինթը։

Ինչպէս ընթերցողը տեսաւ, ոչ ոք այս երկու կարգի բանասէրներից մի ծանրակշիռ ապացոյց չէ բերում ի պաշտպանութիւն այս կամ այն կարծիքի։ Եւ իրաւի, քրննենք Փաւստոսի ծագման մասին մինչեւ այժմ յայտնած կարծիքները։ Ասում են. Բուզանդ յոյն պէտք է լինի, որովհետեւ ինքն իրան յունաց ժամանակագիր է անւանում։ Բայց միթէ չէ՞ր կարող նա ազգով հայ լինել, եւ միեւնոյն ժամանակ յունաց ժամանակագիր։ Կարելի է լինել ազգով հայ՝ բայց բուզանդացոց կայսր (Ղեւոն շայ), ազգով հրեայ՝ բայց գերմանացոց մատենագիր (Հէյնէ)։ Եւ այդ ճշմարտութեանը համոզելու համար կարիք չը կայ անպատճառ պատմութեան դիմել. բաւական է միայն մեր շուրջը դիտել եւ կենդանի օրինակներ կը տեսնենք նոյն իսկ հայերի մէջ. . . . Ասում են. Պատմիչը ոչ մի տեղ չէ ցոյց տալիս իր հայ լինելը, նա երբէք հայոց թագաւորի մասին չէ ասում. «Թագաւորն մեր»։ — Գովում ենք ձեր գիտողական ընդունակու-

Թիւնները. բայց, համաձայնեցէք, որ այդ փաստին վճռական նշանակութիւն տալ չէ կարելի, մանաւանդ որ Փաւստոս յունարէն պատմագրած լինելով՝ անհրաժեշտ պահանջ չը պիտի դգար՝ իր ազգութիւնը յոյն ընթերցողներին յայտնելու:

Ասում են. Բուզանդ՝ հայերին թշնամի է. նա զըպարտում է նրանց, պնդելով, որ նրանք առերես են ընդունել քրիստոնէութիւնը. նա ստում է, թէ Ներսէսի յաջորդները եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքից զրկւեցան: Բայց այս ասողները՝ ոչինչ դրական ապացոյց չեն բերում իրանց ասածները հաստատելու համար, այն ինչ Փաւստոսի առաջին վկայութիւնը անուրանալի պատմական իրողութեան վրայ է հիմնւած: Ոչ մի տեղ եւ ոչ մի ժամանակ մի նոր կրօնական վարդապետութիւն չէ կարող միանգամից խոր արմատներ արձակել մի այնպիսի ժողովրդի մէջ, որ ապրել է դարերով տարբեր կրօնական աւանդութիւններով: Այսպէս եւ քրիստոնէութիւնը սկզբում չէր կարող հեթանոսական աշխարհում հաստատուել առանց ընդդիմադրութեան հանդիպելու, իսկ իշխող կրօն հռչակելուց յետոյ անգամ, նա դեռ երկար պիտի մաքառէր հեթանոսական տրագիցիաների դէմ: Միամտութիւն կը լինէր կարծելը՝ որ միայն մեր ազգն է բացառութիւն կազմել ընդհանուր օրէնքից, մի օրւայ մէջ մոռանալով իր հին հաւատը եւ հոգւով ու սրտով նուիրւելով նոր, իր համար օտար կրօնական վարդապետութեան: Այդ տեսակ կարծիք հակասում է նոյն իսկ մեր պատմիչների վկայութիւններին: Ազաթանգեղի, Զենոբի, Կորիւնի, Խորենացու, մի խօսքով մեր բոլոր հնագոյն պատմիչների վկայութիւններից երեւում է, որ Հայաստանում քրիստոնէութիւնը ոչ միայն չորրորդ, այլ եւ հինգերորդ դարում դեռ մարտնչում էր հեթանոսութեան դէմ: Բայց դիցուք հնութիւնից չունինք այդ մասին տեղեկութիւն: Ո՞վ կարող է հերքել որ մեր ամբօխը նոյն իսկ մեր լուսաւորեալ դարում քրիստոնէական գաղափարների հետ խառնում է շատ անգամ վայրենի հեթանոսական սնտիապաշտութիւններ: Իսկ

եթէ այժմ այսպէս, դժար չէ երեւակայել մեր ժողովրդի կրօնական եւ բարոյական վիճակը մեզանից հազար հինգ հարիւր տարի առաջ: Գալով այն մտքին, իբր թէ Փաւստոս հայոց եկեղեցու թշնամիներիցն է, պէտք է նկատել որ այդ կարծիքն էլ հիմք չունի: Մի մարդ որ այնպիսի խորին ակնածութեամբ է խօսում լուսաւորչի տոհմի մասին, չէ կարող հայոց եկեղեցու թշնամի լինել: Մենք չը գիտենք որքան ճշմարիտ է Փաւստոսի աւանդած այն տեղեկութիւնը, իբր թէ Յուսիկ Բ. եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունք չունէր. բայց կարծում ենք որ այդ վկայութիւնից եզրակացնել, որ Փաւստոսը յոյն էր, տեղիք չը կայ:

Մենք արդէն մատնացոյց արինք այն թոյլ կողմը, որ ներկայացնում է Բուզանդին յոյն համարողների վերջին փաստը: Ասում են. Ղեցերորդ գպրութեան մէջ յիշած Փաւստոս եպիսկոպոսը ինքը պատմագիրն է, բայց ոչ մի ապացոյց չեն բերում այս կարծիքը հաստատելու համար: Մնում է ուրեմն միայն մի իրողութիւն, այսինքն այն որ Փաւստոս Հայաստանը երբէք չէ անւանում «աշխարհն մեր» . . . : Բայց այստեղ մենք ակամայ մտաբերում ենք Կոնիւղի այն հերոսին, որ իր բարեկամին պատմելով՝ թէ որքան մանր միջատներ է տեսել թանգարանում, խոստովանում է որ փղին չէ նկատել: Այսպէս են արել եւ մեր գիտնականները, այն տարբերութեամբ միայն, որ վերջինները փղին տեսել են, բայց չեն ճանաչել: Բանն այն է, որ Բուզանդի պատմութեան վեցերորդ գպրութեան ցանկի վերջին դրած նախադասութիւնը՝ մինչեւ օրս ոչ զք ուղիղ չէ թարգմանել: Ահա ինչպէս է հասկանում այդ խօսքերը պ. Իմինը. «A la fin de toutes ces histoires, les lecteurs trouveront des renseignements sur ma personne, en dix versets bien complets». (Բնական է սրանից յետոյ եւ հետեւեալ ծանօթութիւնը. «Ces renseignements sur la vie de Faustus, qu'il eût été très-précieux de connaître, n'existent plus dans aucun des manuscrits que nous

¹ ՏԵՍ Էջ 2:

possédons actuellement¹⁾). Այսպէս են մեկնում փաւստոսի խօսքերը եւ միւս ուսումնականները, այն ինչ այդ հատուածի միտքը հետեւեալն է. «Եւ մասին տեղեկութիւններ բովանդակող բնութիւնները յետոյ, — ստում է պատմիչը, — ընթացողները կը գործէին ինչ որ ստում էր իրաւելի, հինգերորդ եւ վեցերորդ գլուխներէն յետոյ, որտեղ պատմիչը խօսում է փաւստոս եպիսկոպոսի եւ նրա եղբայր Առոստոմի մասին, գալիս են ուղիղ տասը գլուխ²: Պարզ է ուրեմն որ Բուզանդն է փաւստոս եպիսկոպոսը՝ աղգով հոռոմ: Այս բացատրութիւնից յետոյ հաղիւ թէ կարելի լինի նշանակութիւն տալ այն կարծիքին, իբր թէ փաւստոսը հայոց Սահառուներաց տոհմից էր կամ Սէն-Մարտէնի ենթադրութեանը, իբր թէ նա Սահառուներաց եպիսկոպոս էր: Թէ առաջին եւ թէ երկրորդ դէպքում, կարծում ենք, որ փաւստոս տեղեկութիւն կը տար այդ մասին յատուկ հինգերորդ կամ վեցերորդ գլխում: Հաւանական է որ «Բեբոյ» բառը, որ տեղիք է տւել այդ ենթադրութիւններին, կամ յատուկ անուն է կամ գրւած է սխալմամբ Շեբոյ կամ մի այլ անուն տեղ³: Ինչեւիցէ փաւստոսի հոռոմ լինելը այժմ հաստատուած ճշմարտութիւն է: Բայց ինչ է նշանակում հոռոմ, իրաւամբ կը հարցնէ ընթերցողը: Պարզ է որ այդ բառի սկզբնական նշանակութիւնը հոռոմ անխտիր են գործ ածում, թէ հոռոմացիի եւ թէ յոյն խօսքի մտքով: Եթէ փաւստոսի անունը նայենք, պէտք է ենթադրենք, որ նա հոռոմացի⁴ էր, բայց այդ ճանապարհով հարցը չի վճռուիլ, որովհետեւ փաւստոսի եղբոր անունը՝ Առոստոմ, հոռովմէական չէ եւ առհասարակ քրիստոնէական աշխարհում օտար անուններ ընդունելը սովորական երեւոյթ էր: Ուրեմն այլ միջոց պէտք է ընտրել խնդիրը պարզելու համար: Մենք տեսանք, որ փաւս-

1 Collection—Langlois, t. I, p. 306:
 2 VI, 7—16:
 3 Տես այս մասին եւ հ. Ղ. Վ. Ալեքանի կարծիքը (Շիրակ, էջ 141):
 4 Faustus եւ ոչ Phaustus.

տոսը՝ եպիսկոպոս էր հայոց. ուրեմն հաւանական է, որ նա յոյն եղած լինի, որովհետեւ չորրորդ դարում հայոց եկեղեցու օտարազգի պաշտօնեաները սովորաբար յոյներ էին կամ ասորիք: Միւս կողմից ինքը փաւստոս մի անուղղակի ակնարկութիւն է անում իր յունական ծագման մասին, երբ դատապարտելով հայերին նրանց կամակոր ընթացքի համար՝ համեմատում է նրանց յոյների հետ. «Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց, որ զպահպանութիւն շանցն պահողաց պահպանացն ի բաց մերժեցին, եւ կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան զժին Ալեքանացոյ աստիճան¹: Եթէ աւելացնենք եւ այն իրողութիւնը՝ որ մեր պատմիչը Բարսեղ Վեսարացու մասին խօսում է այնպէս, «որպէս թէ անդուստ յերկնից ի վերուստ իջեալ իցէ²» — այն ժամանակ կասկածել չէ կարելի որ փաւստոս յոյն էր: Տեսնենք այժմ ինչ է պատմում Բուզանդ իր մասին:

Ներսէսի կաթողիկոսութեան ժամանակ նա նրա մերձակոր խորհրդակիցն էր եւ գործակիցը՝ ուրիշ տամբմէկ եպիսկոպոսների հետ միասին, որոնցից պատմիչը յիշում է միայն Զորթ անունով մէկին: Փաւստոսը հայրապետի տանը թելակալի պաշտօն էր վարում եւ աղքատանոցների տեսուչներից մէկն էր: Մեր պատմիչը մի եղբայր ունէր Առոստոմ անունով՝ որ ճգնում էր Այրարատեան գաւառում. երբ նա մեռաւ, մարմինը տարան թաղեցին Ներսէսի Ամօք կողած գիւղում: Մի այլ տեղ փաւստոսը պատմում է՝ որ Ներսէսի մահից յետոյ Պապ աւերեց նրա հիմնած բոլոր բարեգործական հաստատութիւնները եւ հալածեց նրանց վրայ նշանակած վերակացուներին³: Երևելի մեր պատմիչն էլ այդ ժամանակ հարկադրւած թողեց իր պաշտօնը: Թէ ինչ դիրք ունէր փաւստոս Ներսէսի մահից յետոյ, յայտնի չէ: Բայց հաւանական է, որ նա չէր վայելում Ներսէսի յա-

¹ III, 13:
² IV, 7:
³ V, 31:

չորդները սէրը եւ հովանաւորութիւնը եւ իր նախկին ազգեցութիւնը հայրապետանոցում էլ չ'ուներ: Թերեւս Ասպուրակէսի կաթողիկոսութեան ժամանակ նա նորից բարձր դիրք լինի ստացած հայոց եպիսկոպոսների շարքում: Ինչ եւ իցէ, նա ինքն իրան դասում է «երեւելի» եպիսկոպոսների թւում՝ Հայաստանի Պարսից բաժնում: Հաւանօրէն իր պատմութիւնը Փաւստոս աւարտել է չորրորդ դարու իննսնական թւականներին՝ նոյն Ասպուրակէսի հովուութեան օրերով՝ ինչպէս ենթադրում է եւ Սէն-Մարտէն¹: Որքան եւ թանկագին լինին այս տեղեկութիւնները՝ որ մենք քաղեցինք Փաւստոսի երկասիրութիւնից, աներկբայելի է՝ որ նրանք չեն կարող դոճացնել բանասէրի հարցասիրութիւնը: Ուստի բնական է օտարազգի մատենագիրների դրածների մէջ որոնել մեր պատմիչին վերաբերեալ տեղեկութիւններ: Հետաքրքրական են այս նկատմամբ մեծն Բարսեղի 120-երորդ, 121-երորդ եւ 122-երորդ նամակները, որոնք գրւած են 373 թւականին: Այդ նամակներից մենք տեղեկանում ենք որ ոմն Փաւստոս՝ կամենալով ստանալ Սատաղացոց Կիւրեղ եպիսկոպոսի տեղը մի ինչ-որ Պապից առած յանձնարարական թղթով դալիս է Փոքր-Հայաստանից Կեսարիա՝ Բարսեղի մօտ եպիսկոպոս ձեռնադրելու: Բարսեղ մերժում է նրա խնդիրը՝ առարկելով որ առանց հայոց եպիսկոպոսների հաւանութեան, նա չէ կարող նրա ցանկութիւնը կատարել: Այն ժամանակ Փաւստոս դիմում է Տիանայի Անթիմոս եպիսկոպոսին, որ մասամբ Բարսեղին նեղութիւն պատճառել ուղեւորով, մասամբ սնափառութիւնից զրգւած, եպիսկոպոս է ձեռնադրում Փաւստոսին, առանց մնացեալ եպիսկոպոսների կարծիքը հարցնելու: Ձեռնադրւած Փաւստոսը վերադառնում է Կեսարիա, բայց Բարսեղ նորից յայտնում է նրան, որ մինչեւ հայոց եպիսկոպոսներից հաւանութեան նամակներ նա չը բերէ, — ինքը ոչինչ հաղորդակցութիւն չը պիտի ունենայ նրա հետ: Փաւստոսի մեկնելուց յետոյ, Բարսեղ գրով

¹ Histoire du Bas Empire, V. p. 29, note 1.

իմաց է տալիս նրա ապօրէն ձեռնադրութեան մասին Անտիոքի, Նիկոպոլի եւ Սատաղի եպիսկոպոսներին: Հետաքրքրական է մանաւանդ վերջինին գրած նամակը, որով Բարսեղ խնդրում է, որ եթէ Պոյմենիոսը (Սատաղու եպիսկոպոսը) Փաւստոսի վարքը գովելի է տեսնում, տայ իր հաւանութիւնը եւ միւսներին համոզէ նոյնը անելու: Բարսեղի 126-երորդ եւ 127-երորդ նամակներից երեւում է որ Փաւստոսի խնդիրը խաղաղութեամբ վճուել է եւ Անթիմոսի ու Բարսեղի միջեւ հաշտութիւն է կայացել: Յայտնի չէ միայն թէ ստացել է Փաւստոս իր ցանկացած տեղը, թէ ոչ¹:

Որքան ինձ է յայտնի, մեր դիտնականներից հ. Մ. վ. Չամչեանն է միայն ուշադրութիւն դարձրել Բարսեղի նամակներում յիշած այդ Փաւստոս անւան եւ նրա հետ կապւած իրողութեան վրայ: Մխիթարեան պատմիչը կարծելով, որ Անթիմոսից ձեռնադրւած Փաւստոս եպիսկոպոսը մեր Բուզանդ պատմագիրն է, ենթադրում է որ Փաւստոսին Բարսեղի հետ հաշտեցնողը մեր մեծն Ներսէսն էր, որ հրաւիրելով իր մօտ Բուզանդին՝ նրան յանձնեց աղքատանոցների տեսչութիւնը: Մենք այս դէպքում դժւարանում ենք հասկանալ թէ ինչու հ. Չամչեանը աշխատում է ներկայացնել Փաւստոսին որպէս մի խուճարար եկեղեցական: Երկուսից մէկը՝ կամ Փաւստոս միարժանաւոր մարդ էր, կամ եթէ ոչ՝ նրան չէր կարող իր հովանաւորութեան տակ առնել մեծն Ներսէսի պէս առաքինի հայրապետը: Թիւրիմացութիւն է հ. Չամչեանի կողմից նոյնպէս եւ այն, իբր թէ մեծն Բարսեղի յիշած Փաւստոսը եպիսկոպոս է ձեռնադրել հայոց Արշակ թագաւորի օրերով²: 373 թիւը՝ երբ գրւած են Բարսեղի 120-երորդ եւ հետեւեալ երկու նամակները՝ Պապի թագաւորութեան տարին է, եւ ոչ Արշակի: Բայց մեր այս նկատողութիւնը ըստ երեւութիւն աւելի ըյժ է տալիս հ. Չամչեանի ենթադրութեանը: Աւերը տեսանք, որ Փաւստոս Բարսեղի մօտ էր եկել մի ոմն Պապի նամակով: Ո՞վ էր այդ Պապը:

¹ See Patrologiae J. P. Migne, Series Graeca, t. XXXII.
² Չամչեան, Պատմութիւն Հայոց, I, 447—448:

Եթէ նա եպիսկոպոս էր, երեւի նա բաժանաճ էր Բարսեղի
 Հաղորդակցութիւնից, որովհետեւ Բարսեղ ոչինչ պատա-
 նուն չէ տալիս նրան. հակառակ դէպքում, Բարսեղի յիշած
 Պապը նշանաւոր աշխարհական էր՝ որի մօտ որ եւ է պաշտօն
 էր վարում Փաւստոս: 2. Չամչեանի կարծիքը պաշտպանող-
 ները բնականապէս իրաւունք կ'ունենան պնդելու՝ որ Բու-
 ղանդ բերել է իր հետ Պապ թագաւորի նամակը: Սակայն
 այդպէս պնդողը յանձն պիտի առնէ պատճառաբանել եւ
 այն հանգամանքը որ մեր պատմիչի երկասիրութեան մէջ
 Պապը ներկայացրած է մի բարոյական հրէշ: Խնդրի լու-
 ծումը աւելի եւս դժւարանում է այն պատճառով, որ
 Փաւստոս Բուղանդացին իր պատմութեան մէջ մի կողմից յի-
 շում է ոմն ծերունի Փաւստոս եպիսկոպոս՝ որ մեծն Ներսէ-
 սին սարկաւազ ձեռնադրեց, միւս կողմից նա զանց է առնում՝
 մեզ պատմելու, թէ ինչ պաշտօն ունէր ինքը Ներսէսի մա-
 հից յետոյ: Արդ, եթէ ծերունի Փաւստոսը ինքը պատմիչն
 է, պարզ է որ նրան չէ կարելի նոյնացնել Բարսեղի յիշած
 Փաւստոսի հետ: Զէ կարելի այդ ենթադրել եւ այն ժամա-
 նակ, երբ հաստատուի որ Բարսեղի յիշած Փաւստոսը եպիս-
 կոպոս է ձեռնադրել Յուսիկի՝¹ կաթողիկոսութեան միջո-
 ցին, որովհետեւ մեր պատմիչին եպիսկոպոս ենք տեսնում
 Յուսիկի նախորդի՝ մեծն Ներսիսի կենդանութեան ժամա-
 նակ: Եւ իրաւի յայտնի է որ Ներսէսին թուաւորողը Պապն
 էր՝ որ մեռաւ 374 թւին ըստ Ամիսանոս Մարկիլինոս ժա-
 մանակակից պատմագրի: Ուրեմն քիչ հաւանականութիւն կայ
 որ Ներսէս կենդանի լինի եղած 373 թւին, երբ եպիսկոպոս
 է ձեռնադրել Բարսեղի յիշած Փաւստոսը. բայց ենթա-
 դրելով անգամ որ նա կենդանի էր դեռ 374 թւին, դժ-
 ւար է թոյլ տալ որ մեր պատմիչը, եթէ նա մի եւ նոյն Բար-
 սեղի յիշած Փաւստոսն է, Ներսէսի օրերով՝ միայն մի տարի
 լինի եղած եպիսկոպոսական աստիճանում: « Էր առ այնմ
 ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներ-

¹ Ըստ Խոր. Շահ-ի:

սէսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրեւ թելակալ:
 Սոյնպէս Զորթ այր ներքինի ընդ նոսին. քանզի էին ի ներ-
 քնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտա-
 սան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր գործակիցք եւ խոր-
 հըրդակիցք: Թող զայլոց դաւառաց ամենայն եպիսկոպո-
 սեանն, որ ընդ նովաւ, այլ երկրբեան սոքա յայնց երկոտա-
 սանիցն: Եւ էին սոքա ի տեսչութիւն աղքատանոցացն հաւա-
 տացեալք եւ յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամա-
 նակս նորա, եւ յամս Խոսրովու եւ Արշակայ երկուց թա-
 գաւորացն բաժանաւորացն, մինչ դեռ եւս կային սոքա կեն-
 դանի: Այս պատմութիւնից մենք այն տպաւորութիւնն ենք
 ստանում, որ մեր պատմիչ Փաւստոս եպիսկոպոսը տարիներ
 ընթացքում երիտասարդ Ներսէսի գործակիցն ու խորհր-
 դակիցն է եղել: Ենք աւելի կ'ստենք. մեզ թւում է որ նոյն
 իսկ այն ծերունի Փաւստոս եպիսկոպոսը՝ որ Ներսէսին սար-
 կաւազ ձեռնադրեց եւ որ ներկայ էր նրա յուզարկաւորու-
 թեան հանդիսին², ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն մեր պատ-
 միչը: Հետեւաբար, Բուղանդ գրել է իր պատմութիւնը ծե-
 րութեան՝ գուցէ եւ խորին ծերութեան հասակում: Գրա-
 նով ենք մեկնում մենք այն աչքի ընկնող երեւոյթը՝ որ հե-
 ղնակը ոչ մի առիթ ձեռքից չի բաց թողնում ծերութիւնը
 գովելու: Ինչ գովասանքով է նա խօսում ծերունի սուր-
 բերի մասին: Ինչ հաճութեամբ է նա պատմում Յակօբ
 Մծբնացու, Գանիէլ ասորու եւ Շաղիտայի հրաշագործու-
 թիւնները³, իսկ պատանի Յուսիկի բարեմասնութիւնները
 դրուատելիս նա ասում է. « Հայրական միտս զԵրեմիայն հան-
 ճարոյն ստացեալ⁴ » եւ մի ուրիշ տեղ. « Զի թէպէտաւուրբք
 մանուկ էր, այլ զաւագութիւն Զերո-ւսեան խրատուն յիմ-
 քեան ցուցանէր⁵ », « Նա առաւել ունկն դնէր մանկոյն » որ
 ի տիոց հասակակիցք էին նորա » — նկատում է պատմիչը

¹ IV, 3:
² V, 24:
³ III, 10, 14. V, 25, 26:
⁴ III, 5:
⁵ III, 12:

վարազգատի մասին, — առաւել քան զքերոցն իմաստնոց՝ որդի
հարող էին զճիտակար խրատն մարտօցանել նմա¹ ։ Մասամբ հե-
ղինակի հասակով պէտք է բացատրել եւ այն անթիւ կըրկ-
նութիւնները որ վստում են Բուզանդարանի ոչ միայն զա-
նազան մասերում, այլ շատ անգամ մի եւ նոյն գլխում, եւ
որոնք ընթերցողին ձանձրութիւն պատճառելուց զատ՝ ոչ մի
նոր միտք չեն աւելացնում մի անգամ ասածի վրայ:

II.

ԻՆՉ ԼԵԶԻՈՎ Է ՊԱՏՄԱԳՐԵԼ ՓԱԽՍՈՍ

Պիտնականների կարծիքները տարբերում են եւ այս
հարցում: Փաւստոսին հայ համարողները կարծում են, որ
նա հայերէն է գրել իր աշխատութիւնը, իսկ նրա յոյն ծա-
գումը պաշտպանողներից ոմանք ընդունում են այդ կարծի-
քը, միւսները ենթադրում են, որ Բուզանդի պատմութեան
սկզբնագիրը յունարէն է եղել, որովհետեւ Պրոկոպիոս Աե-
սարացին ըստ երեւութիւն օգտուել է նրանից: Վերջապէս
կան կարծողներ, որ մեր պատմիչը պատմագրել է երկու լեզ-
ւովն էլ:

Փաւստոսի պատմութիւնը գրած է այնքան կենդանի
հայախօսութեամբ, այնքան աշխարհիկ ոճեր ու դարձաձե-
ներ է պարունակում նա, — որ առաջին հայեացքից զբժ-
ւար է այդ երկասիրութիւնը թարգմանական համարել:
Բայց խնդիրը գրանով չէ լուծւում: Թարգմանութեան լեզ-
ւի մաքրութիւնը կարելի է վերագրել եւ թարգմանչին,
հետեւաբար աւելի լուրջ փաստեր են հարկաւոր հաստա-
տելու համար, որ Բուզանդի գործի սկզբնագիրը մեզ հա-
սած հայկական բնագիրն է: Համոզեցուցիչ չէ եւ այն բա-
նասէրների բերած ապացոյցը, որոնք կարծում են, որ Փաւս-
տոսը յունարէն է պատմագրել: Գրանց հակառակ կարելի է
ասել, որ Պրոկոպիոս իր ձեռքի տակ ունեցել է սկզբնագրի

¹ V, 35:

յունական թարգմանութիւնը: Ինչ վերաբերւում է մի քանի
բանասէրների այն ենթադրութեանը՝ իբր թէ Փաւստոս
գրել է թէ հայերէն եւ թէ յունարէն, մեզ թւում է թէ
դրանք հարցին ամենեւին չեն պատասխանում: Անհերքելի
ճշմարտութիւն է, որ միայն մի լեզուով պիտի լինէր գրած
Փաւստոսի սկզբնագիրը, եւ դրանից պիտի թարգմանէր
այլ լեզուով: Թարգմանիչը կարող էր լինել ինքը հեղինակը,
բայց այդ չէ նշանակում, որ նրա երկը երկու սկզբնագիր ու-
նեցաւ: Մեզ թւում է թէ մինչեւ օրս ոչ ոք մեր գիտնա-
կաններից չէ հարցրել իրան, թէ կարելի էր արդեօք չորրորդ
դարում գրել հայերէն. եւ այդ է պատճառը՝ որ Ագաթան-
գեղին, Զենոբին, Ս. Գր. Լուսաւորչին եւ մեծն Ներսէսին
վերագրած շարագրութիւնները բուն օրիգինալների տեղ են
ընդունում: Գալով Փաւստոսին, մենք կարծում ենք, որ եթէ
այդ պատմիչը գրել է իր երկասիրութիւնը ոչ յետոյ քան
406 թւականը, ուրեմն չէր կարող նրա սկզբնագիրը հայկա-
կան լինել: Տեսնենք ուրեմն երբ է գրել Փաւստոս իր պատ-
մութիւնը, ապա թէ կ'ապացուցանենք, թէ ինչու մետրո-
պեան գիւտից առաջ նա չէր կարող գրել հայերէն: Ինքը
պատմիչը իր յառաջաբանում խոստանում է պատմագրել
«մինչեւ 'ի... վերջին ժամանակն վատթարելոյ թագաւորաց
հայոց եւ... մինչեւ ցայնսոսիկ ի վերջնսն՝ որք կային գլխաւ-
որք եպիսկոպոսք հայոց»: Կարգալով Փաւստոսի պատմու-
թեան վերջին թերթերը, մենք տեղեկանում ենք որ յառա-
ջաբանում ակնարկած թագաւորների շարքը վերջանում է
Խոսրովի եւ Արշակի անուններով, իսկ գլխաւոր եպիսկոպոս-
ներ Փաւստոս անւանում է Յուսիկի յաջորդներին, որոնք
էին Զաւէն, Շահակ եւ Ասպուրակէս: Մեր պատմիչը որո-
շում է Զաւէնի եւ Շահակի կաթողիկոսութեան տարիները,
բայց Ասպուրակէսի հայրապետութեան ժամանակը չէ յայտ-
նում: Ուրեմն այդ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ
է նա գրել իր պատմութիւնը, ուրիշ խօսքով ասած՝ ոչ
ուշ քան 391 թւականը, այսինքն հայոց տառերի գիւտից
տասնըհինգ տարի առաջ: Հետեւաբար Փաւստոսը հայերէն

պատմագրել չէր կարող, եզրակացնում ենք մենք: Մենք պնդում ենք, որ բուն հայոց գրականութիւն սկսեց զարգանալ միայն հինգերորդ դարում, իսկ դրանից առաջ Հայաստանում տիրապետում էին յոյն եւ ասորի գպրութիւնները, որովհետեւ հայերէն գրելու հնարաւորութիւն չը կար: Եւ իրաւի ինչով բացատրենք այն հանդամանքը, որ չորրորդ դարում Ս. Գրքը չը թարգմանւեցաւ հայերէն: Այդ հարցին պատասխանում է խորենացին իր հետեւեալ վկայութիւնով. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ, ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող եւ թարգմանիչ. եւ եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ. Վասն որոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս հայոց լեզուիս. եւ արկեալ զանձն ի ջանս, պէս պէս փորձիւք տաժանէր՝: Քերթողահօր այս խօսքերը պարզ ի պարզոյ ապացուցանում են, որ միայն ալիաբետի բացակայութիւնն էր պատճառ, որ եկեղեցական գրքերը չորրորդ դարում չը թարգմանւեցան հայ լեզուով: Մեր գիտնականների մէջ ընդհանրացած է այն կարծիքը, իբր թէ չորրորդ դարում հայերէն գրում էին յունաց, պարսից եւ ասորոց տառերով: Այդ տեսակ ենթագրութեան հակասում են մեր բոլոր հասարակական գրքերի վկայութիւնները, որոնք երբեք չեն անկարկում որ 406 թվականից առաջ կարելի լինէր գրել հայերէն: Մեր մեծ լուսաւորիչը եւ նրա աշխարհաչէն զաւակները չորրորդ դարում չէին կարող չը հոգալ ազգի այնպիսի մի անհրաժեշտ պէտքը, որպիսի է Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը, եթէ կարելի լինէր այդ ժամանակ օտար տառեր գործածել հայոց լեզուի բառերը արտայայտելու համար: Մեզ կարող են առարկել, թէ յիշեալ օտար տառերով հայերէն գրել դժւար էր: Բայց խօսքը ոչ թէ դժւարութեան, այլ հնարաւորութեան մասին է, եւ նրանք, որոնք այդ դժւարութիւնն են պատճառ բերում Ս. Գրքի հայկական

1 III, 47:

թարգմանութեան բացակայութիւնը մեկնելու համար, զրանք կամայ թէ ակամայ խոստովանում են, որ դժւարութիւնը այս դէպքում հաւասար էր անհնարաւորութեան: Ինչով բացատրենք եւ այն իրողութիւնը, որ չորրորդ դարում ազգային գպրոցներ չը կային Հայաստանում, եթէ ոչ նրանով, որ չը կար աղբյւրին գիր ու գպրութիւն¹: Վերջապէս այս ճշմարտութիւնը աւելի շօշափելի կացուցանելու համար յիշենք այստեղ Մեսրոպի գիւտի ծագման պատմութեան մի նշանաւոր կէտը: Յայտնի է, որ այդ գիւտից առաջ Գանիէլ անուշով մի ասորի եպիսկոպոսի մօտ գտնւեցաւ մի ուրիշ արժիւղեւտ, որ սակաւթասանակեայ գործածութիւնից յետոյ մերժւեցաւ, որովհետեւ իմացան որ «չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս եւ զկապս հայերէն լեզուոյն», ինչպէս ասում է Վորիւն: Արդ՝ ենթագրելով որ դանիէլեան նշանագրութեան գիւտից առաջ կարելի էր գրել հայերէն յունաց, պարսից եւ ասորոց տառերով, պէտք է պնդել, որ այդ նորագիւտ ալիաբետը առաւելութիւն ունէր նախկին օտար գրերի առաջ, ապա թէ ոչ, ի՞նչ միտք ունէր աւելի անկատար նշանագրութիւն գործածել: Սակայն, եթէ հերքւեցաւ դանիէլեան ալիաբետը, որովհետեւ նրա միջոցով անհնարին եղաւ «ստոյգ հօլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար», ո՞րքան ուրեմն անձիշտ պիտի լինէր հայկական տառադարձութիւնը՝ օտար գրերի միջոցով: Բոլոր այս դիտողութիւնները մեզ այն անխուսափելի եզրակացութեան են հասցնում, որ չորրորդ դարում հայերէն գրելու հնարաւորութիւն համարեալ թէ չը կար: Չէր կարող հետեւաբար այդ լեզուով երկասիրել եւ Փաւստոսը: Բաց ի այս ընդհանուր կշռագատութիւնից, նոյն եզրակացութեանն է բերում մեզ եւ մի մասնաւոր պարագայ: Խօսքս այն իրողութեան մասին է, որ Բուզանդի պատմութեան մէջ պատահող՝ Ս. Գրքից քաղած հատւածները շատ նման են այժմեան բնագրի համապատասխան հատւածներին: Ահա մի քանի օրինակ.

1 Աղաթանգեղ, էջ 626 (տպ. 1862 թ.). Փաւստոս IV, 4:

Նոր կրթություն

Բարձրագույն

Չհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն: (Պօղ. առ կորնթ. առաջին, Գլ. ԺԳ. 1.)

Չհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն: (Էջ. 66, Հրատ. Պատկ.)

Լաւ է նախանձաւոր լինել ի բարին յամենայն ժամ: (Պօղ. առ Գաղատ. Գլ. Գ. 18.)

Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարին: (Էջ 66.)

Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ դրանն Աստուծոյ, հայեցեալք յեւ զնացից նոցա՝ նմանողք լերուք հաւատոցն: (Պօղ. առ եբր. Գլ. ԺԳ. 7.)

Յիշեցէք զառաջնորդս ձեր եւ զվերակացուս ձեր ի Տէր, որք խօսեցան ձեզ զբանն կենաց. հայեցարուք յեւ զնացից նոցա, եւ նմանողք լերուք հաւատոց նոցա: (66-67.)

Չայն խորհեցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ ի քրիստոս Յիսուս: (Պօղ. առ Փիլիպեցիսն, Գլ. Բ. 5.)

Չայն խորհեցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ ի քրիստոս Յիսուս: (Էջ 67.)

Օրինակ առէք եղբարք չարչարանաց եւ երկայնատուծեան ըզմարդարէսն, որ խօսեցան յանուն Յեառն. — Չհամբերուծիւն Յոբայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք: (Թուղթ կաթողիկեայց Յակոբու առաքելոյ Կլ. Ե. 10.)

Օրինակ առէք, եղբարք, զչարչարանաց երկայնատուծեանն ըզմարդարէսն, որք խօսեցան յանուն Տեառն, զհամբերուծիւն Յոբայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք: (Էջ 67.)

Մենք կարող էինք շատ ուրիշ օրինակներ էլ բերել, բայց մտածում ենք, մի գուցէ Փաւստոսի բնագրի մէջ պատահող Ս. Գրքի հատուածները մասամբ ընդօրինակողները լինին մտքած: Եթէ հարազատ են մեր բերած օրինակները, կասկած չը կայ որ Փաւստոս չէր կարող չորրորդ դարում օգտուել մեսրոպեան թարգմանութիւնից. իսկ ենթադրել հակառակը՝ այսինքն որ սուրբ Թարգմանիչներն են օգտուել Փաւստոսի թարգմանութիւնից, չէ կարելի: Մնում է ուրեմն խոստովանել որ Բուզանդի երկասիրութիւնը հինգերորդ դարու թարգմանութիւն է:

Բայց ի՞նչ լեզուից է թարգմանած: Այս հարցին, կարծում ենք, միայն երկու պատասխան կարող է լինել՝ յունարէնից կամ ասորերէնից: Որ ինքը Փաւստոս յունարէն է գրել իր պատմութիւնը, այդ մասին չէ կասկածում ոչ որ Բուզանդարանը թարգմանական աշխատութիւն համարող

բանասերներից: Բայց անտեղի չէ ենթադրելը՝ որ հայերէնը կարող է թարգմանուած լինել ասորերէն թարգմանութիւնից: Հէնց այդպէս էլ կարծում էր հանգուցեալ պրօֆ. Բ. Պատկանեանը իր „Ванскія надписи“ հետազոտութեան մէջ: ԳԺբախտարար՝ յարգելի գիտնականը համոզուցուցիչ կերպով չէ պատճառաբանում իր ենթադրութիւնը: Նրա միակ ապացոյցը հիմնուած է Վիպերտի այն կարծիքի վրայ՝ որ “հնագոյն ժամանակներում” սեմական ազգերը “Թորգոմական” աշխարհ էին անւանում մեր երկիրը, եւ որովհետեւ Փաւստոսի երկասիրութեան մէջ այդ անունը շատ անգամ է յատկացրած հայոց ազգին, ուստի, երեւի ասորերէնից է թարգմանուած Փաւստոսի հայկական տեքստը, եղբակացնում է Պատկանեան: Սակայն յարգելի գիտնականը մոռանում է նախ՝ որ Վիպերտի խօսքը “հնագոյն ժամանակների” մասին է. էլ չէնք ասում՝ որ նա էլ մի պարզ ենթադրութիւն է անում միայն: Երկրորդ՝ միթէ յայտնի չէ՞ որ քրիստոնէական դարերում ասորիք մի եւ նոյն անուն էին տալիս մեզ, ինչ անուն որ տալիս էին արիական ազգերը: Շատ հեռու չը գնանք. բաց անենք խորենացու առաջին գրքի ԺԲ. դուրսը, որի վերջերում կը կարգանք. “յորոյ անուն (իմա յանուն Արամայ) եւ ամենայն ազգք զաշխարհս մեր աւնուանեն, որպէս Յոյնք՝ Արմէն, եւ Պարսիկք եւ Ասորիք՝ Արֆիք”: Կարծում ենք՝ այսքանն էլ բաւական է պրօֆ. Պատկանեանի ապացոյցի անհիմն լինելը հաստատելու համար: Ոչ միայն ասորի, այլ առհասարակ քրիստոնէայ մատենագիրները կարող էին “Թորգոմայ երկիր” անւանել Հայաստանը՝, ինչպէս անւանել են եւ անւանում են հայ հեղինակները՝ մանաւանդ բանաստեղծները եւ ոչ միայն Թորգոմեան՝ այլ եւ Յարեթեան եւ Աքքանագեան աշխարհ: Մեզ թուում է՝ թէ պրօֆ. Պատկանեանը իր կարծիքը ապացուցանելու համար այլ ճանապարհ պիտի ընտրէր. հարկաւոր էր ցոյց տալ՝ որ Բուզանդի տեքստը բովանդակում է իր մէջ հայե-

760

¹ Տես եւ Տիեզ. Պատմ. հ. Յոսեփայ վ. Գաթըրճեանց, շ. 1, էջ 93-94:



րէնին միանգամայն խորթ՝ ասորաբանութիւններ, եւ այդ դէպքում միայն կշիռ կ'ունենար յիշեալ ենթադրութիւնը: Ինչ վերաբերում է մեզ, մենք կարծում ենք՝ որ Բուզանդարանը թարգմանութիւն է յունական բնագրից: Արդարեւ այդ երկասիրութեան լեզուն իր բուն արեւելեան ոճերով ու դարձաձեւերով ամենեւին չէ յիշեցնում յունարէնից ոսկէ դարում թարգմանած ուրիշ հեղինակութիւնները, բայց արժէ մի րոպէ միայն մոռանալ այդ պարագան եւ այլ տեսակետից նայել հարցի վրայ, որպէս զի մեր ենթադրութիւնը ստանայ հաւանականութիւն: Ամենքին յայտնի է այն պատմական իրողութիւնը՝ որ հինգերորդ դարու հայոց գրականական լեզուն զարգացաւ օտար ազդեցութեան ներքոյ: Այդ ազդեցութեան հաղորդիչ հանդիսացաւ սկզբում ասորերէնը եւ յետոյ յունարէնը: Արշակունեաց թագաւորութեան բաժանելուց յետոյ, Հայաստանի պարսից մասից յունական դպրութիւնը հալածւեցաւ: Խորենացու ասելով, երբ Սուրբն Մեսրոպ եկաւ Սասակի մօտ Ս. Գրքի հայերէն թարգմանութեան մասին խորհրդակցելու, տեսաւ՝ որ նա արդէն թարգմանում է ասորերէնից « յոչ լինելոյ յունի », որովհետեւ, մեկնաբանում է քերթողահայրը, նախ՝ Մեհրուտան Արծրունին պրել էր տւել Հայաստանում գտնւած բոլոր յոյն գրքերը եւ երկրորդ՝ հայոց երկիրը բաժանելուց յետոյ, պարսիկ վերակացունները իրանց բաժնում թող չէին տալիս յունարէն ուսանել, այլ միայն ասորերէն¹ »: Զարմանալի չէ ուրեմն՝ որ առաջին թարգմանիչները աշակերտած լինելով գլխաւորապէս ասորոց դպրոցներում, սկսեցին մշակել հայոց գրականական լեզուն ասորերէնի օգնութեամբ: Այս է՝ այսպէս կոչւած « գրոց » լեզւի զարգացման առաջին ֆազիսը: Մի նոր դարագլուխ է սկսում այն ժամանակից, երբ հայոց լեզւի մշակութեան գործը անցնում է յունական դպրութեամբ կրթւած կամ, ինչպէս ասում է Խորենացին, « ճեմարանի վերաբանութեանը » հմտացած

¹ III, 54:

Թարգմանիչների երիտասարդ աշակերտների ձեռք: Այդ դպրոցին ենք պարտական մենք այն քերականութիւնը՝ որ ոսնատակ անելով կենդանի բարբառը, առաջ բերեց ժողովրդի համար խորթ մի արեւստական գրականութիւն, որին այժմ « կլասիկական » անունն ենք տալիս:

Ի հարկէ՝ որոշ սահման դնել մեր հին գրականական լեզւի զարգացման այդ երկու պերիօդների մէջ չէ կարելի: Ասորերէնի բացառիկ ազդեցութիւնը երկար չը տեսց: Շատերը Ս. Թարգմանիչների աշակերտներից, որ ստացել էին ասորական կրթութիւն, շուտով սկսեցին կրկնապատիկ եռանդով ուսումնասիրել յունական լեզուն ու գրականութիւնը: Գրա հետեւանքը այն եղաւ՝ որ աւելի քիչ մեղանչելով մայրենի լեզւի օրէնքների դէմ, նրանք իրանց գրւածներում զգուշութեամբ համակերպւեցին երբեմն յունական, երբեմն ասորական մտածողութեան եղանակին: Բայց ինչ որ էլ լինի, մեր « ոսկեդարեան » գրականութեան լեզուն մի տխրալի հաստատութիւն է տալիս այն կարծիքին՝ որ ահագին վիճակար մեր գրականութեան ներկայացուցիչների եւ հայ ժողովրդի միջեւ: Մեր ընտիր մատենագիրների երկասիրութիւնները անմատչելի էին մեծամասնութեանը, ժողովուրդը չէր կարող հասկանալ ոչ միայն նրանց բովանդակութիւնը, այլ եւ այն լեզուն, որ գործ էին անում հեղինակները: Շատ նշանաւոր հանձարների արտագրութիւններ փոշոտում էին վանքերի պահարաններում, իսկ ամբոխը տգիտութեան խաւարի մէջ ընկղմւած՝ շարունակում էր ապրել վաղեմի պապական աւանդութիւններով . . . :

Սակայն մի քանի նշաններից երեւում է՝ որ « ընտրեալների » գրականութեան հետ միաժամանակ եւ զուգահեռաբար զարգանում է եղել մի ուրիշ ժողովրդական գրականութիւն: Լինելով գլխաւորապէս հեթանոսական աւանդութիւնների արձագանք, նա ատելի է եղել հոգեւորականութեան ընտիր մասին: Բայց արհամարհւած լինելով փոքրաթիւ լուսաւոր դասից, նա միշտ վայելել է ժողովրդի սոււար մեծամասնութեան սէրն ու յարգանքը: Կպատակ ունենալով

ծառայել Հասարակ մահկանացուների մտաւոր կամ գործնական պահանջներին, նա խիստ տարբեր է եղել ընտրեալների գրականութիւնից թէ լեզուով, թէ բովանդակութեամբ: Այդ տեսակ գրականութեան գոյութիւնը արաբական տիրապետութեան շրջանում ամէն կասկածից դուրս է: Բայց իսկապէս նրա սկիզբը թաղանթէ հայկական մատենագրութեան սկզբը բնաւորութեան դարում: Մեղ թուում է թէ Բուզանդարանը մէկն է այն հազարապիւտ յիշատակարաններից, որոնց հիման վրայ կարելի է գտնէ աղօտ դաղափար կազմել այժմ կորած հնագոյն հայ ժողովրդական գրականութեան լեզուի եւ բովանդակութեան մասին: Ով ծանօթ է Փաւստոսի երկասիրութեանը, նա հաղիւ թէ երկմտի՝ որ հեղինակը ուսեսալների համար չէ նշանակել իր աշխատութիւնը: Այն առասպելները, զրոյցներն ու անեկդոտները, որոնց այնքան ընդարձակ տեղ է տւած Բուզանդի պատմութեան մէջ, յարմար են աւելի ամբոխի՝ քան քաղաքակիրթ դասի ընթերցանութեան: Փաւստոս ոչ մի տեղ ուսումնական պատմիչ չէ ձեւանում, ոչ մի ժամանակագրական ցուցմունք չէ ներկայացնում, ոչ մի աղբիւրի վրայ մատնանիչ չէ լինում, — մի խօսքով, նա չէ ուղում ոչինչ հաշիւ տալ ընթերցողին իր պատմութեան ստուգութեան աստիճանի մասին: Աղքատների հասարակութեանը սովոր հեղինակը կարծես ենթադրել է՝ որ իր ընթերցողներն էլ իր ստորագրեալների պէս սոգէտներ պիտի լինին...:

Ըստ երեւութիւն թարգմանիչը ճիշտ է հասկացել օրիգինալը ընդհանուր բնաւորութիւնը եւ ճարտարութեամբ կարողացել է բանեցնել մի այնպիսի լեզու՝ որ թէ դիւրըմբւ բանելի է եւ թէ նիւթին վայել: Ներկայանալով ընթերցողների ընդարձակ շրջանի առաջ որպէս ժողովրդական պատմող, Բուզանդարանի թարգմանիչը ի հարկէ անհրաժեշտ պարտք չէ համարում հետեւել մեր ընտիր մատենագիրների ստեղծած քերականութեանը: Նրա գլխաւոր հոգան է՝ գրել ոչ այնքան գեղեցիկ ու կանոնաւոր, որքան մեծամասնութեանը մատչելի լեզուով: Այս է պատճառը՝ որ Բու-

զանդարանը համարեա թէ չէ ներկայացնում մեղ խորթ օտարաբանութեան օրինակներ, եւ որ նրա լեզուն աւելի բնական է քան հինգերորդ դարու մեր նոյն իսկ ինքնուրոյն հեղինակութիւններինը: Ուշագիր ընթերցողը հաղիւ մի քանի նշմարներից միայն կարող է եղբակացնել՝ որ այդ երկասիրութիւնը թարգմանած է յունարէնից: «Թշնամի համարեալ թուէր որոյ հանապաղ անցանէին զկարգօքն Քրիստոսի¹»: «Բագուսէ է Իսկ զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ²»: Մի քանի այստեսակ նախադասութիւններ մատնում են հեղինակի ձեռքի տակ եղած սկզբնագիրը: Ի հարկէ այս յունաբանութիւնները շատ սովորական են մեր հին գրականութեան մէջ, սակայն քանի որ դրանք բացառիկ կամ գտնէ հազարէկ օրինակներ են Բուզանդարանում, ուստի մենք ստիպւած ենք ենթադրելու՝ որ թարգմանչի աչքի առաջ յունարէն տեքստ է եղել: Նոյն եղբակացութիւնն ենք հանում մենք Փաւստոսի երկասիրութեան մէջ պատահող մի շարք յունական բառերից, ինչպէս, օրինակ՝ սեւնհորոս, որիտորոս, սոգէտերս, սիւղակէ, սարաբելար, արիւրեւնու եւ այլն: Կրկին չենք վիճում՝ որ յիշեալ բառերից շատերը գործ են ածել եւ մեր հին մատենագիրները: Բայց ինչով մեկնենք՝ որ հայոց Վահագնը շեւրիլ³ է անւանւած երկու տեղ եւ սովորական նախաբար բառի փոխարէն սարապ⁴ բառն ենք կարգում բազմիցս:

Մենք տեսանք՝ որ Փաւստոսին յոյն համարող գիտնականները միտքան պնդում են՝ որ նա յունարէն է պատմագրել, բայց մի քանիսները այդ կարծիքը ընդունելով հանդերձ, ենթադրում են՝ որ Բուզանդարանը ասորերէնից է թարգմանւած: Մենք ցոյց տւինք այդ յարգելի կարծիքի պաշտպաններին՝ թէ որն է իրական միջոցը այդ ենթադրութեանը փոքր ի շատէ ոյժ տալու համար, եւ մեր կողմից աշխատեցինք ասպացուցանել՝ որ Փաւստոսի այժմեան բնագիրը

¹ III, 12:
² IV, 15:
³ III, 14:
⁴ IV, 3, 4, 5 եւ այլն:

Թարգմանած է յունական օրիգինալից: Այժմ հակառակ ենթադրութեան առիթով այս էլ կը նկատենք՝ որ Բուզանդարանի ասորերէն տեքստի գոյութեան մասին, որքան յայտնի է, ոչ մի գրականութեան մէջ յիշատակութիւն չը կայ:

III.

ԲՈՒՋԱՆԴԻ ԲՆԱԳԻՐԸ

Փաւստոսի բնագրին վերաբերեալ խնդիրները կարելի է վերածել երկու հարցի. նախ՝ ամբողջ է արդեօք հասել մեզ նրա երկասիրութիւնը եւ երկրորդ՝ ինչ անհարազատ յաւելածներ եւ աղճատումներ կան Բուզանդարանում:

Յայտնի է՝ որ Փաւստոսի պատմութիւնը սկսուում է երրորդ դարութիւնից: Այս հանգամանքը առիթ է տւել ոմանց կարծելու՝ որ առաջին երկու դարութիւնները կորել են: Միւսները պնդում են՝ որ այդ երկասիրութիւնը անթերի է հասել մեզ, որովհետեւ պատմիչը իր գործի առաջաբանում վկայում է՝ որ չորս դիրք է աշխատասիրել եւ այդ է այժմեան դարութիւնների թիւը: Արեւմտեան մի քանի գիտնականներ էլ կարծում են՝ որ Փաւստոսի պատմութեան սկիզբը անթերի է, բայց վերջից պակաս է տասը գլուխ¹, որոնց մէջ պատմիչը իբր թէ տեղեկութիւններ է հաղորդել իր կեանքի մասին: Այս խնդրում առանձին դիրք է բռնել մեր գիտնական պ. Մ. Էմինը, զանազան ժամանակ երկու տարբեր կարծիք յայտնելով: 1858 թւին Խորենացու պատմութեան իր ուսերէն թարգմանութեան ծանօթութիւններին մէկում, յարգելի բանասէրը հետեւեալ դատողութիւնն է անում քերթողահօր մի ակնարկութեան առիթով². «Թէ ում ունի ի նկատի Մովսէս Խորենացին, ասելով է Բայ Բանից եւ անո՞՞ ինչ յաւան շայիս կուտի, — յայտնի չէ: Երեւի նրանից առաջ գոյութիւն է ունեցել հայոց

¹ Տէս էջ 5-6:
² Տէս Խորենացի I, 22:

որեւէ ուրիշ պատմութիւն, որի մէջ Հայկ նահապետի մասին այն չէ պատմած եղել, ինչ ասում է Մար-Աբաս: Մխիթարեան գիտնականները ենթադրում են՝ որ Մովսէս Խորենացին այստեղ ակնարկում է Փաւստոս Բիւզանդացու վրայ: Ինձ թւում է թէ այս կարծիքը բաւականաչափ հիմք չ'ունի: Նախ՝ մեզ չ'են հասել Փաւստոսի հայոց պատմութեան առաջին երկու գրքերը, որոնց մէջ նա, ինչպէս կարծում են, կարող էր ձառել Հայկի մասին: Երկրորդ՝ պէտք է դեռ ասպացուցանել՝ որ Փաւստոսը իրօք գրած է եղել այդ երեւակայական երկու դարութիւնները: Ես կարծում եմ, — շարունակում է յարգելի ուսումնականը՝ — որ Փաւստոսի հայոց պատմութիւնը հասել է մեզ նոյն կերպարանքով, ինչպէս զուրս է եկել հեղինակի գրչի տակից, որ նրա մէջ ոչինչ պակաս բան չը կայ, չը նայելով՝ որ նա սկսում է երրորդ դարութիւնից: Մեր հին պատմիչների մէջ սովորութիւն կար՝ որ հետագայ տարեգիրը, երբ իր նախորդի երկասիրութեան շարունակող էր հանդիսանում, սկսում էր իր պատմութիւնը այն կէտից, որտեղ կանգ էր առել վերջինը: Այսպիսի դիպածում, հետեւելով կարգին, նա անւանում էր իր պատմութիւնը երկրորդ, երրորդ, չորրորդ եւ այլն, ինչպէս այդ անում է ի միջն այլոց եւ Ղազար Փարպեցին: Փաւստոս Բիւզանդացին նոյն մտքով երրորդ դարութիւն է անւանում իր պատմութեան առաջին մասը, որովհետեւ նախորդ պատմիչը՝ Ագաթանգեղոս անուրել է Տրդատի թագաւորութեան եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի պատմութիւնը, որ երկու մասի էր բաժանած: Հետեւաբար, նրա պատմութիւնը, որպէս շարունակութիւն Ագաթանգեղի, պէտք է անշուշտ երրորդ դարութիւնից սկսւեր¹: Գոյն կարծիքը տասը տարուց յետոյ պ. Էմինը քննադատում է Փաւստոսի իր ֆրանսիական թարգմանութեան յառաջաբանում.

¹ Нестора Армения Моисея Хоренского, стр. 264—265. Համեմատեցէք պ. Էմինի այս կարծիքը Նեյմանի կարծիքի հետ. „Das erste Buch dieser Geschichte des Faustus wird das dritte genannt, weil der Verfasser sein Werk als eine Fortsetzung des Agathangelos wissen will. (Versuch einer Geschichte der armenischen Literatur, S. 26.)

„Mais cette supposition, tout ingénieuse qu'elle paraisse, ne repose sur aucune preuve et se trouve en désaccord avec le texte même de l'Avis préliminaire de Faustus¹“. Բայց հետաքրքրական է իմանալ պ. Էմինի նոր կարծիքը: Այս անգամ նա իր ուշադրութիւնը դարձնում է Փաւստոսի պատմութեան երկրորդ մակագրի վրայ — «Բուզանդարան պատմութիւնը»: Աւերուածելով «Բուզանդարան» բառի կազմութիւնը, մեր գիտնականը կարծիք է յայտնում՝ որ «Բուզանդարան պատմութիւնը» նշանակում է „Bibliothèque historique de Faustus de Byzance“, Բուզանդի այդ «Պատմական Մատենագարանը», պ. Էմինը նմանեցնում է Գիողոր Սիկիւիացու «Մատենագարանին», ենթադրելով որ եւ Փաւստոս գրել է մի քանի ազգերի պատմութիւն: Իր «Մատենագարանը», մեր պատմիչը բաժանել է իբր թէ երեք մասի: Առաջին երկու մասերը, որոնց բովանդակութիւնը ուրիշ ազգերի պատմութիւնն էր կազմում, կորել են: Հասել է մեզ երրորդ մասը՝ այն է հայոց պատմութիւնը²:

Աւելի մեծ իրաւունքով կարելի է ասել պ. Էմինի այս նոր ենթադրութեան մասին այն, ինչ որ նա ինքն է ասում իր նախկին կարծիքի մասին: Եւ իրաւի օտարոտի է պնդելը՝ թէ Փաւստոս գրել է մի քանի ազգերի պատմութիւն, հիմնւելով միայն «Բուզանդարան» բառի բննազթօսիկ ստուգաբանութեան վրայ:

Նախ՝ Փաւստոսի կարծեցեալ «Պատմական Մատենագարանի» մասին մենք ոչինչ տեղեկութիւն չ'ունինք ոչ մեր ոչ յունաց գրականութիւնից: Երկրորդ՝ Բուզանդարան բառի նշանակութեան մասին կարելի էր անել աւելի սրամիտ ենթադրութիւններ, եթէ միայն այդ ընթերցածի հնութիւնը կասկածելի չը լինէր³: Աւերջապէս մեր խնդրի լուծումը

¹ Collection, t. I. p. 206.

² Ռուսահայ գիտնականի սոյն կարծիքը քիչ փոփոխած կրկնում է Բուզանդարան բառի սակայն աղբիւրը (Պրակ առաջին, էջ 21—22):
³ Փաւստոսին յիշող հայ մատենագիրները ճանաչում են նրան որպէս «Արտեւսի պատմութեան» կամ «Հայոց Պատմութեան» հեղինակի: Պրոկոպիոս Աեսարացին դոյն անունն է տալիս իր աղբիւրներից մէկին, որ ինչպէս կարծում են, Բուզանդի երկն է: Սակայն Ս. Էջմիածնի մատենա-

Բուզանդարան բառի մեկնութիւնից չէ կախած: Իմանալու համար՝ ամբողջ է հասել մեզ Փաւստոսի պատմութիւնը, թէ թերի, պէտք է կարգաւ նրա երրորդ գլխութեան առաջին գլուխը: Այդտեղ նախ եւ առաջ ծանուցանելով՝ որ հայոց պատմութիւնը սկսած Թադէոս առաքեալի եւ Սանատրուկ թագաւորի ժամանակից մինչեւ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատի մահը ուրիշներն են գրել, պատմիչը շարունակում է. «Բայց եւ մեր ի մերում աստ եղաք լիորբ ի շատէ ի կարգի պատմութեան, ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին: Ասան զի է ինչ մեր պատմութեան» որ առաջին է, եւ է ինչ՝ որ վերջին է: Իսկ որ վերջին է, եղև այն է յետոյ այն գրեւ զբեց»¹: Այս պարզ խօսքերը հազիւ թէ կարօտ են երկար բացատրութեան: Պատմիչը ինքն է վկայում՝ որ գրել է հայոց առաջին (հին) եւ վերջին (նոր) պատմութիւնը: Առաջին է անւանում նա մեր պատմութիւնը՝ նախնական ժամանակներից սկսած մինչեւ Թադէոս առաքեալի գալուստը: Աւերջին ասելով նա հասկանում է Տրդատի յաջորդների ժամանակը մինչեւ Արշակունեաց թագաւորութեան բաժանելը: Աւերջապէս վերջին անունն է տալիս նա այն շրջանին, որ բաժանում է Սանատրուկի թագաւորութիւնը Տրդատի մահուան ժամանակից: Այսպիսով, պատմագրի սեպհական վկայութիւնից մենք եզրակացնում ենք՝ որ նրա պատմութեան մի բաւական նշանաւոր մասը կորել է²: Այդ հաստատում է եւ Պրոկոպիոսի մի ակնարկութեամբ, որ մեջ է բերում Հայոց Պատմութեանից մի այնպիսի իրողութիւն, որի մասին յիշատակութիւն չը կայ Փաւստոսի մեզ հասած երկասիրութեան մեջ, հետեւաբար բիւզանդական պատմիչը այդ տեղեկութիւնը քաղած պիտի լինի Փաւստոսի «առաջին» պատմութիւնից³: Պէտք է ենթադրել՝ որ նոյն

գարանում մեր տեսած երկու գրագիր օրինակները կրում են լոկ «Բուզանդարան պատմութիւնը» վերնագիրը: Նոյն մատենագարանի ձեռագիր ժողովածուներից մէկում կայ մի ծաղկաբաղ «Բուզանդարան պատմութեան»:
¹ Ընթերցողին ենք թողնում ստուգել թէ մեր գիտնականներից որքան տարբեր ենք ըմբռնում մեր Փաւստոսի յիշեալ հաստատումը:

² Καὶ τότε τις τῶν ἐν Παρθοῖς βασιλέων τὸν ἀδελφὸν τὸν

իսկ Տինգերորդ գարում Բուզանդի երկասիրութեան այդ մասը անձանօթ է եղել շատերին: Գոնէ Ղազար Փարպեցին ոչ միայն ոչինչ չը գիտէ նրա « առաջին » պատմութեան մասին, այլ ուղղակի պնդում է՝ որ Փաւստոս գրել է Ագաթանգեղի պատմութեան շարունակութիւնը: Սակայն մենք տեսանք՝ որ այդ վկայութիւնը հակառակ է Բուզանդի սեփական խօսքերին:

Բացի յիշած մասից՝ Փաւստոսի երկասիրութեան միջև կարող են բաց ընկած լինել աւելի մանր հատուածներ, որոնց պակասութիւնը այժմ զգալի չէ: Սակայն խիստ աչքի է ընկնում չորրորդ գլուխութեան Ժ. Գլխի թերի լինելը: Բուզանդ այդ գլխի վերնագրում խոստանում է ի միջի պլոց պատմել թէ ինչպէս Արշակ յետ է կանգնում՝ Շապուհին տւած իր երգումից, սակայն պատմութեան ընթացքում այդ խոստումը կատարած չենք տեսնում, եւ գլխի վերջերում իմաստը միանգամայն խանդարւում է: Պարզ չէ՝ թէ ում է ասում Շապուհ . . . « Չեր սրտի մտօք էր տուեալ զերգումն, զիւրդ կարէր ըստ հաւանութեան ելանել երգմանցն եւ կամ փախչել: Այլ գիտեմ զի կախարգութեամբ խաբեցէք զիս . . . » Հաւանական է որ այդ զայրագին խօսքերը վերաբերւում լինին Տիգրանի երէցներին, որովհետեւ անմիջապէս դրանից յետոյ պարսից թագաւորը սպանել է տալիս նրանց: Այդ երեւում է եւ Ծ. Գ. գլխից, որտեղ պատմիչը Շապուհի բերանով յիշեցնում է, թէ ինչպէս կոչւեցան նրա առաջ Տիգրանի երէցները եւ ինչպէս էին արգարացնում իրանց՝ թագաւորի մեղադրութեան դէմ: Այս դիտողութիւններից յետոյ ակնբեր է որ Ժ. Գ. գլուխը թերի է:

Գանք այժմ այն հարցին՝ թէ ի՞նչ անհարազատ յաւելուածներ եւ աղճատումներ են մտել Բուզանդի բնագրի մէջ: Ղազար Փարպեցու շնորհով մեր բանասէրների մէջ բաւական տարածւած է այն կարծիքը՝ իբր թէ Բուզանդարանը լի է զանազան անվաւեր գրւածներով: Սակայն մինչեւ

օրս ոչ որ ցոյց չը տւաւ՝ թէ որո՞նք են այդ անվաւեր գրւածները: Այս առիթով յայտնած են թագաւորութիւններից ուշագրութեան արժանի են Տ. Զ. Գաթրըճեանի եւ պ. Կ. Բիւզանդացու թէօրիաները: Առաջինը պնդում է՝ որ Փաւստոս Բուզանդին վերագրած աշխատութիւնը գործ է մի հայի, որ կամեցել է զարգարել իր սեպհական գրւածը « Ծանօթ յոյն ժամանակագրի մ'անուամբ »: « Ի դէմն Փաւստոսի խօսուած՝ բոլոր գրքին մէջ եւ ոչ բառ մը կը գտնենք, ասում է Տ. Գաթրըճեան: Ստուգիւ Սահառունին է՝ որն որ կը խօսի ¹ »: Գիտնական մտիթարեան վարդապետը չէ հերքում՝ որ հայ պատմիչը առջեւն է ունեցել մի յունարէն երկասիրութիւն, որին հետեւել է տեղ-տեղ. « սակայն միտք չունի ամէն բան յոյնի սեփականելու, » նկատում է նա: ԳԺբախտաբար մենք չենք կարող ընդունել « Տիեզերական պատմութեան » հեղինակի կարծիքը, որովհետեւ « ի դէմն Սահառունի խօսուած՝ բոլոր գրքին մէջ եւ ոչ բառ մը կը գտնենք: Ստուգիւ Փահառուն է՝ որն որ կը խօսի »: Զ. Գաթրըճեանի թիւրիմացութիւնը առաջ է եկել այն սխալ ենթագրութիւնից՝ իբր թէ Սահառունի հեղինակը իր մասին տասը գլուխ տեղեկութիւն է տւել եւ « տասն ալ հիմա չկայ, որն որ առ հասարակ հին գրոց յիշատակարանաց ստեպ պատահած գԺբախտութիւն է »: Եթէ նա ուղիղ լինէր թարգմանած այն հատուածը, որի մեկնութիւնը տւինք մենք մեր փորձի առաջին գլխում ², այն ժամանակ չէր անիլ այդպիսի համարձակ ենթագրութիւն:

Աւելի հետաքրքրական է պ. Կորայր Բիւզանդացու տեսութիւնը: Քննասէրը նոյնպէս յոյն է համարում Փաւստոսին, բայց կարծում է՝ թէ այդ յոյնի գրւածը սկզբում անցել է մի ասորու ձեռից, որ ձեւել է յունական բնագիրը « զինչպէտ եւ զինչկամք ³ »: « Հայ թարգմանչին ձեռք ընկած օրինակն ոչ այլ ինչ էր ըստ իս, ասում է պ. Բիւզան-

αὐτοῦ Ἀρμενίους βασιλέα κατεστῆσατο Ἀρσάκην ὄνομα, ὥσπερ ἡ τῶν Ἀρμενίων ἱστορία φησί (De Aedificiis, III, 1.)

¹ Տես « Հանդէս Ամսօրեայ », 1889, N^o. 3, էջ 40—43:
² Տես էջ 2:
³ Քննասէր, Պրակ I, էջ 22:

դացին, եթէ ոչ այս փոփոխեալ օրինակն: Քննասէր պարօնը անհնարին է համարում «մտադրութեամբ կարդալ զԲիւզանդարանն եւ չնկատել ի նմին երկու այլակերպ եւ իրարու բոլորովն աննման գրիչներ: Մին սիրող է չափազանցութեան, խեղկատակութեան, ցոփութեան. միւսն սնեալ եւ տոգորեալ սուրբ գրովք՝ կ'ախորժի վարդապետել, խրատել, կշտամբել զթուրութիւն Հայոց ի քրիստոնէական կրօնս: Առաջինն՝ զուարճացնել եւ ծիծաղեցնել կուզէ. երկրորդն՝ ի զղուժն եւ յապաշխարութիւն կը յորդորէ հոգեկրօն անձանց առաքինութիւններն եւ սքանչելիքները մանրամասնօրէն պատմելով: Կս ճշմարիտ աշխարհական օ՛րէ, զոր իւր հեշտասիրութիւնն մինչեւ ի լիտութիւն կը տանի. սա կարաբեալ եկեղեցական օ՛րէ, տեղեակ աստուածաբանական խնդրոց, զոր իւր նախանձայուզութիւնն ուղղափառ կրօնից՝ կը մղէ մինչեւ յանվայելուչ անարգական բացատրութիւնս ընդդէմ Արիանոսաց (երես 98): Այս աշխարհական է առաջի բուն ներշնչի բրոցս՝ Յոյնն Փաւստոս Բիւզանդ. Ե այս եկեղեցական է անանուն ոմն, որոյ սուրբ ըլլալն է սուրբ պետի ներառչութիւն: Թողնենք հետազօտէ, բայց այստեղ յիշեցնենք ընթերցողին որ «Յոյնն Փաւստոս Բիւզանդ», ինչպէս տեսնք, ոչ թէ «Ճշմարիտ աշխարհական», այլ «կարաբեալ եկեղեցական» է, այնպէս որ այն ապացոյցները, որ մեջ է բերում քննասէր պարօնը իր կարծիքը հաստատելու համար, բոլորովն կորցնում են մեր աչքում իրանց նշանկութիւնը: Այս էլ ասենք՝ որ այդ ապացոյցները առանց այն էլ շատ թոյլ հիմք ունեն: Օրինակ, պ. Բիւզանդացին նկատում է՝ որ «Փաւստոսի համար Վաղէս կայսրն է «[Թագաւորն մեծ Յունաց», եկեղեցականին համար նոյն կայսրն է «անօրէնն Վաղէս», «չարագործն Վաղէս» եւ վերջապէս «էշ»՝ կարծես թէ իշխանութեամբ մեծ լինելը արգելում է լինել հերետիկոս, չարագործ եւ յամառ կամ յիմար: «Կեսարիոյ Եւսեբիոս եւ պիսկոպոսն մերթ կը կոչուի «կաթողիկոսն կաթողիկոսաց

¹ Ibid., էջ 28—29:

«սուրբն մեծանունն Երանելին հոյակապն սքանչելին Եւսեբիոս», եւ մերթ կը նկարագրուի իբր նախանձոտ մարդ եւ ատեցող սրբոյն Բարսղի Կեսարացոյ. եթէ սուրբ էր Եւսեբիոս, ապա չէր նախանձոտ. եթէ նախանձոտ էր, ուրեմն սուրբ չէր»: Այդ տեսակ բացիօնալիստական դատողութիւն ամենեւին անտեղի է՝ մանաւանդ Բուզանդարանի վերաբերութեամբ: Յայտնի է՝ որ Եւսեբիոսից շատ աւելի նշանաւոր «սուրբ» ունեցել են շատ աւելի մեծ մարդկային թերութիւններ: Գիտէ ի հարկէ պ. Բիւզանդացին եւ այն՝ որ «սուրբ եւ Երանելի մականունները տալիս էին շատ անգամ հանգուցեալներին, այնպէս որ զարմանալի չէ՝ որ մի եւ նոյն հեղինակը Եւսեբիոսին սուրբ անւանելով հանդերձ, մատնացոյց արած լինի նրա մի մասնաւոր պակասութիւնը:

Այս օրինակներն էլ, կարծում ենք, բաւական են պ. Բիւզանդացու քննադատական մեթոդի մասին գաղափար տալու համար: Առ հասարակ քննասէր պարօնը աշխատում է հակասութիւն գտնել այնտեղ, որտեղ մենք միայն պարզ ճշմարտութիւն ենք տեսնում, եւ լիտութիւն է որոնում այնտեղ, որտեղ մենք ակամայ բացազանչում ենք. O sancta simplicitas! Մենք էլն առիթ կ'ունենանք խօսելու պ. Բիւզանդացու նկատողութիւնների մասին: Այժմ թոյլ ենք տալիս մեզ՝ մեր համեստ կարծիքը յայտնել Փաւստոսի բնագրի մասին:

Մենք չենք կասկածում՝ որ Փաւստոսի երկասիրութեան մէջ մնացել են այն աղբիւրների հետքերը, որոնցից նա օգտուել է, եւ այդ մտքով՝ մենք կարող ենք խմբագրութիւն անւանել Բուզանդարանը: Մեզ թուում է միայն որ Փաւստոսի բնագրի մէջ մոռտ գործած անհարազատ հատուածների քանակութիւնը այնքան աննշան է՝ որ այժմեան բնագիրը քիչ է որոշում սկզբնական օրինակից: Մեզ օտար գրչի արդիւնք են երեւում հետեւեալ տեղերը: Գանիէլ քորեպիսկոպոսի¹ եւ Ներսէս Մեծի² գուշակութիւնը Ար-

¹ III, 14:

² IV, 15:

շահունեաց թագաւորութեան բարձման մասին կարող է մտած լինել Բուզանդի բնագրի մէջ ոչ առաջ քան Հինգերորդ դարու առաջին կէսը: Մի քանի ճառեր, խրատներ եւ աղօթքներ ակնյայտնի կերպով ձգձգած են: Այսպէս են, օրինակ, այն յորդորները, որ կարգում է Մեծն Կերսէսւլաղէսի գլխին¹, նոյն հայրապետի քաջալերական խօսքերը դէպի իր արքայակիցները անապատ կղզու վրայ², դէպի Արշակ ուղղած խրատը³, Բագաւանի ճակատամարտի ժամանակ արած աղօթքը⁴ եւ այլն⁵:

Աւելի նշանաւոր է առանձին բառերի աղճատումների թիւր: Փաւստոսի բնագրի մէջ մտած այդ վրիպակներից մի քանիսը ուղղել են արդէն հրատարակողները եւ պ. Նորայր Բիւզանդացին իր «Հայկական Բարձրագոյն» աշխատութեան մէջ: Այստեղ մենք ուղղում ենք մի քանի սխալներ, որ սպրդել են մեր բանասերների աչքից⁶:

Ի՛նչ	Տպագր. է	Ուղղ. է
12	Արշակունիսց արքային	Արշակունուոյ արքային
17	Գործարար նահապետի	Գատարեւայ նահապետին
19	Յակոբ, Գործարարի ազգանուն	Յակոբ որդի բեռ Անակայ զգօն
20	Կայսրի հատեալ	կայսրու հատեալ
26	Ինչո՞ւն Ծովացն	Երկրոցն Ծովացն
30	ոչ որ այն ոչ գոյր	ոչ որ այլ ոչ գոյր
31	Եւ ոչ այլ որ . . . գոյր ոչ	. . . գոյր ոչ
34	յաղքատակերութիւնս	յաղքատատեցութիւնս
37	վարդապետեալ էր	վարդապետ տուեալ էր
42	եւ հանէին յայգւոջն եկեղեցոյն	եւ հանէին թաղէն . . .
55	Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. Բարձրագոյն յերկին ասորեորանէայց	Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց (թագաւոր?) յերկին ասորեորանէայց
56	աղանազգիք	աղեղնաձիգք
57	աղանազրօշք	աղեղնազրօշք
69	լուս օրթողութիւն	զայր օրթողութիւն
76	նի նոքա եղբորորդիք	զն էին նոքա եղբորորդիք
77	ի իւրն մի մեծ	ի կղզի մի մեծ

¹ IV, 5:
² IV, 6:
³ IV, 13:
⁴ V, 4:

⁵ Հիմք կայ եթագրերու՝ որ Բուզանդարանի մի քանի հատուածները տեղափոխած են: Գոնե շորրորդ գլխութեան ԽԻ. գլխութիւնը ամենեւին կապ չունի ոչ նախընթաց, ոչ հետեւեալ գլխի հետ:

⁶ Իջերը ցոյց են աւած ըստ հրատարակութեան Բ. Պատկանեանի:

89	զվեց ու՛	զվեց ամիս
100	բազում ինքանօ+	բազում ինքորանօք
156	ամենայնիւ երբէք հայր	իրբեւ ամենայնիւ հայր
160	զՎրդդակ ոմն անուն	էրբն զՎրդդակ (Գղակ?, Կիւղակ?)
173	իշխան աս զաւառին	. . . Անգիւ տան գաւառին
177	Մուշեղ յերկրէն Պարտի	. . . յերկրէն Կասբից
190	Եղեւ յետ մահուանն	Եւ եղեւ յետ մահուանն
201	որ երկու եղբարք	արք երկու եղբարք
206	Չարքայն Յունաց	զարքայն Պարսից
216	Երբեք հասաներ ի դաւառն	երթեալ հասաներ . . .
226	օրիս արկեալ զուսովք	լօրիկ արկեալ . . .

Մատնացոյց անելով այս մի քանի վրիպակները, մենք ի հարկէ հեռու ենք մտածելուց՝ որ դրանցով սպառուում լինին Բուզանդարանի մէջ մտած աղճատումները: Մենք կարող էինք Փաւստոսի երկասիրութիւնից մէջ բերել մի շարք հատուածներ, որտեղ այնքան կուտակւած են համանիշ բառերը՝ որ պարզ երեւում է՝ նրանցից մի քանիսը ընդօրինակողների կամ ընթերցողների մեկնաբանութիւններն են: Սակայն ուղղել այդ տեսակ նախադասութիւնները, որոշել թէ ինչ է նրանց մէջ սկզբնական օրինակին համաձայն եւ ինչպէս է ջնջել որպէս յետագայ դարերի կօմմենտար, — համարեա հնար չը կայ: Ամէն դէպքում, այդ փափուկ խնդիրը մեծ շրջահայեցութիւն է պահանջում քննադատից: Վերջացնելով մեր խօսքը Փաւստոսի բնագրի մասին, մենք կը նկատենք՝ որ այդ բնագիրը ոչ այնքան անարատ է հասել մեր ձեռը, ինչպէս կարծում էր երբեմն պ. Խմինը, ոչ էլ այնքան այլակերպւած, ինչպէս ենթադրում են Տ. Յ. Գաթրըճեան եւ պ. Նորայր Բիւզանդացին: Այդ երեւում է եւ այն հանգամանքից՝ որ մեզ հասած գրչագիր օրինակների միջեւ չը կայ էական տարաձայնութիւն, բայց կան բազմաթիւ մանր ու մունր վարիանտներ:

ՓԱԻՍՏՈՍ ՈՐՊԷՍ ՊԱՏՄԻՉ

Պատմական երկասիրութեան ուղիղ գնահատութեան համար անհրաժեշտ է իմանալ, որոնք են պատմիչի աղբիւրները եւ ինչ տեսակէտից նա նայում պատմական իրողութիւնների վրայ:

Մի թեթեւ հայեացք բաւական է համոզելու համար՝ որ Բուզանդի աղբիւրների մէջ առաջնակարգ տեղ են բռնում անգիր աւանդութիւնները, հեղինակի անձնական յիշողութիւնները եւ ժամանակակիցների կամ ականատեսների պատմածները: Եւ իրաւի, յիշենք՝ որ իր դրութեան շնորհով մեր պատմագիրը միջոց է ունեցել շփուելու ժողովրդի բոլոր դասակարգերի հետ: Որպէս եկեղեցական՝ նա լաւ ծանօթ է եղել հոգեւորականութեան վիճակին, որպէս կաթողիկոսի խորհրդական՝ նա յարաբերութիւններ է ունեցել արքունի դրան եւ ազնւական դասի հետ: Որպէս աղքատանոցների տեսուչ՝ նա շատ մտտ է կանգնած եղել ամբօխին: Եթէ սրա վրայ աւելացնենք եւ այն՝ որ նա ինքը երկար տարիներ ապրել է եւ, ինչպէս երեւում է իր աշխարհագրական ցուցմունքներից, շատ ճանապարհորդել է Հայաստանում, այն ժամանակ հաղիւ թէ զարմանալի լինի՝ որ աւելի քան յիսնամեայ շրջանի պատմութիւնը Բուզանդ գրել է համարեա թէ առանց գրաւոր աղբիւրների օժանդակութեան: Ի հարկէ այս գէպքում բանը չէր կարող անց կենալ առանց կոպիտ սխալների, սակայն մեր պատմիչը յաւակնութիւն էլ չէ յայտնում ամէն ինչ ճշտիւ արձանագրելու: «Սուսն ու զորդը» միամտաբար խառնելով, նա աւելի զոյց է անում անցած գնացած օրերից, քան հարգում է հաւաստի պատմական փաստեր: Ընթերցողների առաջ նա աղատ է համարում իրան պատասխանատուութիւնից, որովհետեւ մեծ մասամբ նա տալիս է նրանց այն, ինչ առել է նրանցից: Հետաքրքրական է այդ տեսակէտից համեմատել Փաւստոսին

Խորենացու հետ: Մինչ վերջինը անդադար մատնացոյց է անում իր աղբիւրները, դատողութիւններ է անում իր պատմածների հաւանականութեան աստիճանի մասին, ներողութիւն է խնդրում այս կամ այն անցքի՝ թերի աւանդելուն պատճառով, արդարացնում է իրան քննադատութեան առաջ, — Փաւստոս, ինչպէս ասում են, առանց այլեւայլութեան, առանց որեւէ ծանօթութեան, առանց որեւէ երկբայութիւն արտայայտելու, պատմում է երբեմն ամենաանհաւատալի, ամենաանհեթեթ առասպելներ այն պարզ ու պայծառ հաւատով, որ յատուկ է կրիտիկայի անընդունակ խուժանին:

Սակայն մեր պատմիչը քիչ թէ շատ օգտւել է եւ գրաւոր յիշատակարաններից: Գեռ հ. Ինճիճեանը կարծիք էր յայտնում՝ որ Բուզանդի աղբիւրներից մինն է եղել արքունի դիւանը: Բայց բաղմաշխատ հնախօսի այդ համարկութիւնը (conjecture) գրական փաստերով չէ հաստատուում: Ճշմարիտ է, Փաւստոս մի տեղ յիշատակում է Խոսրով Առտակի մի օրէնքը¹, մի ուրիշ տեղ նա հաղորդում է Յովիանոսի եւ Շապուհի միջեւ կայացած դաշնագրի համառօտ բովանդակութիւնը², — սակայն այդ եւ մի քանի ուրիշ այդ տեսակ տեղեկութիւնների մէջ չէ երեւում պաշտօնական դիւանաւաններին վայել ոճ կամ ձեւ՝ որ կարելի լինէր առանց տարակուսանքի ընդունել հ. Ինճիճեանի կարծիքը: Մենք միայն այսքանը կարող ենք ասել՝ որ եթէ Բուզանդ օգտւել էլ է արքունի դիւանից, այնու ամենայնիւ շատ քիչ եւ անփոյթ կերպով: Գժւար է նոյնպէս ասել՝ ծանօթ են եղել Փաւստոսին լաբուբնայի, Ագաթանգեղի եւ Զենոբի պատմութիւնները, թէ ոչ, գժւար է մանաւանդ այն պատճառով՝ որ այդ երեք երկասիրութիւնների վաւերականութեան նկատմամբ քննադատութիւնը յայտնել է իրաւացի կասկածներ: Այս այսպէս լինելով, չէ կարելի որոշ եզրակացութեան հասնել նոյն իսկ բնագիրների համեմատական

¹ III, 8:² IV, 21:

ուսուճմասիրութիւնից յետոյ: Բայց եւ այնպէս, աւելորդ չենք համարում մէջ բերել այստեղ մի երկու հատուած Ագաթանդեղից եւ Փաւստոսից, որոնցից ընթերցողը կը տեսնէ երկու պատմիչների բնագիրների նմանութիւնը:

Փ—...—

Չաւետարանական ընթացն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհօք Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեւեան առ ի բարեացն քաջայերութիւն, զցայդ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովքն մերձաւորաց եւ հեռաւորաց զհոգեւոր եռանդն ածէր (Էջ 12, հրատ. Բ. Պ.)¹:

... Ար չափեաց զերկինս թղաւ եւ զերկիրս ամենայն քլաւ իւրով, որ եդ զլերինս ի կշիռս եւ երարձ զդաշտս կշռորօք, որ գիտաց զինաստուծիւն Հօր իւրոյ եւ եղև նմա խորհրդակից, որ ընդ Հօրն առնէ զամենայն վճիռ դատաստանացն . . . (Էջ 164):

Սակայն միտ գնելով մեր պատմիչի երրորդ դպրութեան առաջին գլխում արած ակնարկութեանը, իրաւունք ունինք ենթադրելու՝ որ Բուզանդ օգտուել է իր նախորդների երկասիրութիւններից, միայն ի հարկէ այնքան, որքան որ իր պատմութեան ընթացքում առիթ է ունեցել խօսելու նախընթաց շրջաններում տեղի ունեցած դէպքերի վրայ: Լաբուսեանայի, Ագաթանդեղի եւ Չենորի գրածների հարադատութեան մասին կասկածելով հանդերձ, չենք կարող չը նկատել՝ որ մեր պատմիչը շատ կէտերում համաձայն է նրանց հետ: Այսպէս, օրինակ, Բուզանդն էլ ճանաչում է Թագէտոս առաքեալին քրիստոնէութեան քարոզիչ Սանա-

¹ Եթէ չենք սխալում, առաջին հատուածը ունի եւ Կորին, իսկ վերջինը կայ եւ Ս. Գրքում:

տրուկի օրերով: Նա էլ է վկայում՝ որ Արտաւանի սպանութեան պատճառով՝ թշնամութիւն կար հայ արշակունիների եւ սասանեանների միջեւ, որ Այրարատեան դաւառում նահատակեցան Հուսիսիմէն եւ Գայիանէն իրանց ընկերներով, որ Հայաստանում առաջին եկեղեցւո. հիմքը դրեցաւ Տարօնում, որ Տրդատ կալածներ պարգեւեց եկեղեցուն, որ Արիստակէս մասնակցեց Նիկիոյ ժողովին եւ այլն:

Փաւստոսի գրաւոր աղբիւրների թւում պէտք է նշանակել եւ Ս. Գիրքը եւ սրբոց վարքերը եւ վկայաբանութիւնները: Մենք արդէն տեսանք՝ որ Բուզանդարանում կան քաղաճներ հին եւ նոր կտակարանից: Բաւական չէ այդ հեղինակը մասամբ սուրբ Գրքից է փոխ առնում եւ պատմելու ձեւը, իսկ երբեմն փոփոխելով միայն յատուկ անունները, քաղում է այն տեղից ամբողջ հատուածներ¹: Նոյն կերպով է օգտուում Փաւստոս երբեմն եւ սրբոց վարքերից կամ ուրիշ գրաւոր աղբիւրներից: Այսպէս, օրինակ, նա պատմում է այն յայտնի իրողութիւնը՝ որ մեծն Բարսեղ խոստանում էր բժշկել Աղղէսի երեխային, եթէ արիանոս կայսրը ուղղափառութիւն ընդունէ եւ տայ մանկանը ուղղափառներին մկրտելու, — բայց Բարսեղի անւան տեղ դնում է Մեծն Ներսէսի անունը: Նւսերիսի եկեղեցեական պատմութեան մէջ Փերիանոսի նկատմամբ պատմած հրաշքը նա կրկնում է Բարսեղի եւ Ներսէսի վերաբերութեամբ: Նոյնպէս իմանալով՝ որ Աղղէս աքսորել է ուղղափառ եպիսկոպոսներից շատերին՝ Ներսէսին էլ է աքսորել տալիս մի անապատ կղզի² . . . :

Աղբիւրներից այս կերպ օգտուելու Փաւստոսի հակումը նկատու է նաեւ հ. Յ. Գաթրոճեանը եւ պ. Ն. Բիւզանդացին:

¹ Այսպէս օրինակ, հետեւեալ հատուածը կազմած է ըստ Մատթէոս աւետարանի (1, 20). «Երեւցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսլեանն, եւ ասէ ցնա. Յուսիկ որդի Գրիգորի մի երկնչը . . . » (III, 5): Cf. նոյնպէս Փ. III, 10 եւ Ծննդ. XXII, 11. Փ. IV, 8 եւ Գործք Առաքելոց X, 17 եւ մասնաւոր Փ. IV, 22, եւ Մակարայեցւոց Ա. VI, 43-46:

² Այսպիսի բարենպաստ կարգախումբ սովորական է թէ օտարազգի եւ թէ մեր հին գրականութեան մէջ: Այսպէս, օրինակ, յայտնի է՝ որ Ագաթանդեղի մատեանի հեղինակը շատ բան հարեւ է ըստ Ս. Գրոց: Այլ պակաս առատ նիւթ է մատակարարում այդ տեսակետից եւ քերթողահօք պատմութիւնը:

Միայն այս իրողութիւնից սրանց արած եղբակացութիւնը տարբերուած է մերից: Է. Պատմութեան այդ բոլոր վերաբրուած է Սահառուներն, իսկ Քննասէրը ասորի եկեղեցականին: Արժէ կանգ առնել պ. Ն. Բիւզանդացու դատողութիւններ վրայ: Մենք ենասէր արդէն թէ ինչպէս անաչող է պատճառաբանում քննասէր պարոնը իր այն կարծիքը թէ Բուզանդացանք մասամբ մի աշխարհականի գործ է, մասամբ էլ մի եկեղեցականի: Մենք թողինք նրան այն ժամանակ, երբ նա կամենում էր հետադառնել այդ եկեղեցականի ասորի լինելը: Այժմ ընթացողին ծանօթացնենք այդ հետադառութեանը: Նախ եւ առաջ պ. Բիւզանդացին ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ որ մեր պատմիչի երբորդ դպրութեան Ժ գլխում բերած աւանդութիւնը թէ Նոյեան տապանը իջել է Կորդուաց գաւառում՝ Սարապոյ լեռան վրայ, — ասորական ծագում ունի: Երկրորդ, պ. Քննասէրը զարմանք է յայտնում որ Բուզանդարանում «տարապայման դժվարանութիւնը» են շտայած ասորի սուրբերի, ինչպէս օրինակ, Յակոբ ՄԺԺնացու, Ղանիէլ քորեպիսկոպոսի եւ Ըաղիտայի մասին, — եւ ուրիշ եւթ չէ գտնում այդ երեւոյթը բացատրելու, քան այն՝ որ Բուզանդացի երկրորդ հեղինակը ասորի է: Երրորդ, յիշեցնելով որ ասորիները մեծ ազդեցութիւն են ունեցել Պարսկաստանում՝ սկսած քրիստոնէութեան առաջին ժամանակներից մինչեւ մահմետականութեան երեւան գալը, որ Ըապուհ Բ-ի, Յազկերտ Ա-ի եւ Առամ Է-ի օրերով քրիստոնէութեան դէմ յուզած հայածանքների պատմութիւնը հասել է մեզ՝ ասորի մատենագիրների ձեռքով եւ որ մինչեւ օրս կան Պարսկաստանում այնպիսի նահատակած սուրբերի ասորական վկայաբանութիւններ, որոնք բոլորովին անձանօթ են մնացել յոյներին եւ լատինացիներին, — պ. Բիւզանդացին գտնում է որ «Բուզանդարանի մէջ . . . բաղում ուրեք կը համաձայնի մեր ասորի եկեղեցականն» Պարսկաստանի մարտիրոսաց վկայաբանութեանց ասորի հեղինակաց հետ, որոնցից առանձնապէս քննասէր պարոնը մատնացոյց է անում երրորդ հայածանքի պատմութեան հեղինակ Նփրկերտի եպիսկոպոս Մարութային: Համեմատելով Փաւստոսի տեքստը Մարութայի գործի հայերէն եւ Ֆրանսերէն թարգմանութիւնների հետ եւ շեշտելով երկու ընագիրների նմանութիւնը, պ. Բիւզանդացին աւելի է համոզում իր յայտնած նթագրութեանը: Զորրորդ, մտաբերելով որ չորրորդ դարում Հայաստանի մի քանի գաւառները, մասնաւանդ Եկեղեցաց եւ Տարօն, լի էին ասորի քահանաներով եւ կրօնաւորներով եւ վկայ բերելով Յովհան Մաթիսեանին՝ ինչ վերաբերում էր Սուսաւորի վանքի առաջնորդները ասորիներ էին, որոնց գրեւծների ժողովածուն «Ասորոց պատմութիւն» անանեցաւ, պ. Նորայր Բիւզանդացին նթագրութիւն է յայտնում որ «Բուզանդարանի ասորին» շատ բան, ինչ վերաբերում է Տրդատի եւ Ղուսաւորի ժամանակին, քաղել է այդ պատմութիւնից: Հինգերորդ, Քննասէրը պնդում է որ հակառակ Պաղարի նթագրութեան, Փաւստոսի գրքի մէջ ձեռք խառնող ասորին, թերեւս Գլուկայ վանական, «ուրիշ բան ըրած չէ, բայց եթէ սրբութիւններ մտցնել Յոյն պատմաբանին (իմա Փաւստոսի) գրոց մէջ,

այնպիսի սրբութիւններ որ ղՀարանց վարս կամ ղՃառս եւ ղՅորդորակս երանաշնորհ վարդապետաց եկեղեցւոյ կը յիշեցնեն ի տեղիս ուրեք:» Արեւապէս պ. Բիւզանդացին փառաբանական ծանուցանում է. «Ժամ է որ մատչիմ ի լեզուարանական դատողութիւնս՝ որք յերեւան պիտի հանեն թէ ինչպէս սերտութեամբ եւ մտերմութեամբ ձեռն ՚ի ձեռն կու տան Բիւզանդարանս եւ այլ թարգմանութիւնը որ եղած են յասորոյն ՚ի հինգերորդ դարու:» Այստեղ ընթացողի հետաքրքրութիւնը հասնում է ամենաբարձր աստիճանի, բայց աւանդ, պ. Բիւզանդացին այնքան խստասիրտ է՝ որ անմիջապէս այդ սրտայոյզ խոստովաց յետոյ՝ իր բարեմիտ ընթացողի զխնն առաք ջուր է ածում, փակագծում յայտնելով. «աստ աւարտի երկրորդ մասնն»:

Մանրամասն քննադատութեան ենթարկել յարգելի քննակերի փաստաբանութիւնը կը նշանակէր մասամբ կրկնել առաջւայ ասածներս: Ուստի կը բաւականանանք մի երկու նկատողութիւնով: Պ. Բիւզանդացու այս դատողութիւնները, մեր կարծիքով, բղխել են մի ակնյայտի թիւրիմացութիւնից, որ կարելի է ձեւակերպել այսպէս. «Միայն ասորի մատենագիրն է կարող օգտուել ասորոց գրաւոր աղբիւրներից:» Այդ է պատճառը որ Բուզանդարանում ասորական աղբիւրի հազիւ նկատելի հետքն էլ նա ընդունում է որպէս անսխալ անփայտցոյց յօգուտ այն նթագրութեան թէ այդ պատմական երկասիրութիւնը մասամբ մի ասորի եկեղեցականի գործ է: Թող այդ երեւմն այնտեղ, որտեղ յարգելի քննասէրը նշմարում է ասորական աղբիւրի ազդեցութիւն, մերք այդպիսի բան չենք տեսնում բնաւ: Օրինակ, Փաւստոսի եւ Մարութայի ընագիրները համեմատելիս պ. Բիւզանդացին ի միջի այլոց ասում է. «Մարութա կը գրէ, թէ զմարմին Ակիփսիմաս եպիսկոպոսին, որ նահատակեցաւ յամին 376, գաղտուկ ամփոփել տուաւ Հայոց թագաւորին դուստրն՝ որ յայնժամ պատանդ էր իդրան Ըապհոյ արքայի: Բիւզանդարանի ասորին անուղղակի իմն կը ծանուցանէ մեզ թէ Մարութայի յիշած Հայոց թագաւորն է Պապ. վան զի Պապ, որ թագաւորեց Քրիստոսի 370—376(?) թուականին, ի վերջին ժամանակս իշխանութեան իւրոյ « . . . սկսաւ թիկունս իւր առնել դարբայն Պարսից, եւ արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեանն. երես 231. ահա այս միաբանութեան համար ընդ Ըապհոյ՝ Պապ զիւր դուստրն պատանդ յուղարկած կերեւի ՚ի դուռն Պարսից թագաւորին:» Նախ, եթէ Փաւստոսի եւ Մարութայի միջեւ կայ կապակցութիւն, ճշտիւ աւանդել են մի եւ նոյն պատմական իրողութիւնները, կամ որ Մարութան է օգտուել Փաւստոսի երկասիրութիւնից եւ ոչ հակառակը: Երկրորդ, պ. Բիւզանդացին այս հատուածով ի զուր է ձգնում միաբանել երկու մատենագիրներին, որովհետեւ 376 թւին, երբ նահատակեցաւ Ակիփսիմաս, Պապ (+ 374) արդէն մեռած էր, այնպէս որ նա չէր կարող այդ ժամանակ իր աղջկան պատանդ ուղարկել

¹ Քննասէր, էջ 55—56:

պարսից դուռը, ինչպէս պնդում է քննասէր պարոնը: Թող այդ Պապի դուստրը — հաւատանք որ Պապ աղջիկ էլ է ունեցել — 376 թւին հաղիւ թէ այնքան չափահաս լինէր որ կարողանար գաղտուկ ամփոփել տալ Ալիփսիմասի մարմինը, — որովհետեւ ինքը Պապ սպանեցաւ երկու տարի դրանից առաջ՝ ծաղիկ հասակում:

Մակայն արդարութիւնը պահանջում է խոտովանել՝ որ այս տեսակ անհիմն ենթադրութիւնների հետ միասին «քննասէր» ներկայացնում է եւ բաղձաթիւ ճիշտ դիտողութիւններ: Միայն ափսոս՝ որ մի եւ նոյն դիտողութիւններից մենք տարբեր կարծիք ենք դուրս բերում՝ քան մեր յարգելի բանասէրը: Մինչ այ. Բիւզանդացին աշխատում է ապացուցանել՝ որ մի ասորի եկեղեցական «ղնչպէտ եւ զինչկամք» փոփոխել է Փաւստոսի բնագիրը, մենք ենթադրում ենք որ Փաւստոս ինքն է այդպէս օգտուել, ի միջի այլոց եւ ասորական յիշատակարաններից:

Մեր պատմիչի աղբիւրները որոշելուց յետոյ՝ դժւար չէ գուշակել պատմական իրողութիւնների վրայ նրա ունեցած տեսակէտը: Այդ հայեացքը, որ բնաւորում է Փաւստոսին, որպէս կղերական պատմիչի եւ ժողովրդի մարդու, աւելի կը պարզւի մեզ համար, եթէ մի հարեւանցի ակնարկ ձգենք այն շրջանի վրայ, որ նկարագրւած է Բուզանդարանում:

Տրդատի մահից յետոյ Հայաստանը սկսում է հետզհետէ մտնել քաղաքական անկման: Այն ներքին եւ արտաքին խռովութիւնները, որոնց ժամանակաւոր առերեւոյթ դադարումը միջոց էր տուել բարեպաշտ թագաւորին աջողութեամբ առաջ տանել իր ձեռնարկած մեծ կրօնական յեղափոխութիւնը, աւելի սպառնալի զօրութեամբ նորոգւում են Տրդատի յաջորդների ժամանակ: Պետական իշխանութիւնը լարում է իր բոլոր ուժերը երկիրը վերահաս քայքայման վտանգից ազատելու համար, բայց չը կարողանալով ազգային միութեան դրօշակի տակ միացնել ձգտումներով միմեանցից խիստ որոշող տէրութեան զանազան տարրերը, — նա յաղթահարւում ու ջլատւում է անհաւասար կոււի մէջ: Եկեղեցին, որ առաջ պետութեան գլխաւոր նեցուկն էր, այժմ իր ձեռք բերած ընդարձակ նիւթական միջոցների եւ իր բարձր ներկայացուցիչների բարոյական գերազանցութեան շնորհով, այնպիսի վտանգաւոր մրցակից է հանդիսանում արքունիքին, որ այս վերջինը շուտով թող-

նում է նոր կրօնի հովանաւորութեան քաղաքականութիւնը եւ բացարձակ կոււի է սկսում հոգեւոր իշխանութեան դէմ: Այդ կոււի հետեւանքը այն է լինում, որ բարձրաստիճան եկեղեցականներից շատերը զոհ են գնում թագաւորների բռնութեանը: Խոտրովի յաջորդի՝ Տիրանի հրամանով գանակոծութեամբ սպանւում է Յուսիկ կաթողիկոսը եւ խեղդամահ է լինում Դանիէլ քորեպիսկոպոսը: Արշակի ժամանակ քիչ է մնում քարկոծւի կաթողիկոսի տեղապահը՝ Խաղբագրեւանդացին, եւ Մեծն Ներսէս, թագաւորի արարքներից զրւած, հրաժարւում է հայրապետական աթոռից: Արշակի որդին՝ Պապ հացկերոյթի վրայ թուճաւորում է կաթողիկոսին . . . :

Մաքաուելով եկեղեցու ոսնձգութիւնների դէմ, պետական իշխանութիւնը մի եւ նոյն ժամանակ ստիպւած է կոււել նախարարների անհնազանդութեան դէմ: Տեսնելով որ մեղմ միջոցները անզօր են նրանց փառասիրական դիտումների առաջն առնելու, թագաւորը կրկին դիմում է արիւնահեղ դատաստանի սիստեմին: Խոտրով գրեթէ ազգահատ է անում Բղունինների եւ Աղձնեաց Բակուր բզեշիտի տոհմը: Տիրան անխնայ կոտորում է Ռշտունիներին եւ Արծրունիներին: Արշակ չէ խնայում նոյն իսկ իր հարազատ եղբորորդիներին: Պապ սպանել է տալիս իր առաջին աջակից՝ Աիւղակ մարդպետին: Վարազդատ խնձոյքի սեղանը ներկում է Մուշեղ սպարապետի արիւնով . . . :

Այս ներքին գժտութիւնները էլ աւելի գրգռում են հոռոմեական եւ պարսկական գաղտնի ինտրիգների շնորհով: Բիւզանդիան եւ Տիգրանը, այս երկու դարաւոր թշնամիները, որոնց համար Հայաստանը դարձել էր երկպառակութեան խնձոր, ունէին այնտեղ իրանց առանձին կուսակցութիւնները: Բիւզանդիայի ազդեցութեան հաղորդիչներն էին եկեղեցին ի դէմն Ղուսաւորչի տոհմի եւ նոր կրօնի նախանձաւոր նախարարները, որոնց պարագլուխն էր Մամիկոնեան տունը: Ընդհակառակը, հայոց այն իշխանները, որոնց մէջ աւելի զօրեղ էր անձնական ինտերէսների դիտակցութիւնը, քան ու-

ղիղ կրօնական հայեցողութիւնների պահանջը, — կազմում էին պարսկական կուսակցութիւնը: Անջատուած լինելով Սասանեաններից կրօնական եւ ցեղական ռիսակալութեան զգացմունքով, Տրդատի յաջորդները առհասարակ խոյս էին տալիս պարսիկների գերիշխանութիւնից: Սակայն դառն փորձը համոզեց նրանց՝ որ Բիւզանդիայի հովանաւորութեան վրայ էլ շատ յոյս դնել չէ կարելի: Երբ թագաւորը անցնում էր հռոմայեցիների կողմը, նախարարներից շատերը, գրաւելով պարսից թագաւորի խոստումներից, ապստամբւում էին նրա դէմ: Միւս կողմից, հռոմայեցոց կայսրները, Արեւելքում հետամուտ լինելով իրանց եսական շահերին, նեղ տեղն ընկած ժամանակ՝ անպաշտպան էին թողնում Հայաստանը: Այսպէս, Յովիանոս կայսրը, ամօթալի դաշինք կապելով Շապուհի հետ, թող տւաւ՝ որ Արշակունեաց թագաւորութիւնը դառնայ պարսկական ասպատակութիւնների ասպարէզ եւ հռոմայեցոց նախկին դաշնակիցը՝ Արշակ հիւժի Անուշ բերդում: Այս դրութիւնից մի եւք կար միայն. ստեղծել մի այնպիսի իշխանութիւն, որ հաշտեցնելով կենտրոնախոյս ձգտումները եւ վերականգնելով երկրի մէջ խաղաղութիւն, — աներկիւղ եւ անկասկած ուղղէր իր ուժերը արտաքին թշնամիների դէմ: Չէ կարելի ասել՝ որ այս գաղափարը օտար լինէր չորրորդ դարու հայերին: Թէ հոգեւորականութիւնը, թէ թագաւորը եւ թէ նախարարները լաւ էին ըմբռնում միութեան անհրաժեշտութիւնը: Սակայն չը կարողանալով հասկանալ՝ որ միայն փոխադարձ զիջողութիւնների հիման վրայ է հնարաւոր հզօր պետական իշխանութեան կազմակերպութիւնը, նրանք ձգտում էին իրանց նպատակին, ռանակոխ անելով հակառակորդի իրաւունքները: Այս է պատճառը՝ որ նախարարների դաշնակցութիւնից յոյսը կտրած պետական իշխանութիւնը սկսում է երկդիմի քաղաքականութիւն բանեցնել իր հզօր դրացիների նկատմամբ: Գահը պահպանելու համար նա հակուում է մերթ հռոմայեցիների, մերթ պարսիկների կողմը, նայելով թէ որն է առաջարկում աւելի ձեռնտու պայմաններ: Սակայն այդ

կեղծ դրութիւնը երկար չէ տեւում, եւ չորրորդ դարու վերջին քառորդում Հայաստանը «ղօրէն հնացեալ ձորձոյ» պատառւում է . . . :

Ահա այս տագնապալի ժամանակն է ներկայացնում Բուզանդ: Միտ դնելով մեր պատմիչի ծագմանը եւ պաշտօնին, կարելի էր ենթադրել՝ որ իր երկասիրութիւնը նա գրել է խիստ կուսակցական հոգով: Սակայն Բուզանդարանի մտաւոր ուսումնասիրութիւնից հեշտ է համոզւիլ՝ որ Փաւստոս ընդհանրապէս անկողմնապահ է եւ ազնւամիտ: Ճշմարիտ է, նա չէ ծածկում իր խորին համակրութիւնը դէպի Լուսաւորչի եւ Մամիկոնեան տոհմերը, նա առանձին սիրով է կանգ առնում նրանց մեծագործութիւնների նկարագրութեան վրայ, — սակայն նա չէ փակում աչքերը եւ նրանց շրջանում կատարուած անարժան գործերի առաջ: Այսպէս, նա երեւան է հանում իր պաշտելի Ներսէսի հօր անառակ վարքը եւ Մամիկոնեան Ղասալի հայրենասիրութեանը եւ քաջութեանը արդարութիւն տալով հանդերձ, պատմում է թէ ինչպէս նենգութեամբ սպանել տւեց նա իր եղբօրը: Միւս կողմից, որքան եւ ատում է նա եկեղեցական իշխանութեան դիմագրող թագաւորներին, այնու ամենայնիւ միջոց է տալիս մեզ ուսումնասիրելու եւ նրանց բնաւորութեան լուսաւոր կողմերը, յարգանքով է վերաբերւում դէպի Արշակունեաց գահը եւ դատապարտում է ապստամբ նախարարների ընթացքը: Առհասարակ Փաւստոս, եթէ ի բաց առնենք իր մի քանի բարեպաշտական սուրբութիւնները (pia fraus), գիտակցաբար երբէք չէ աղաւաղում իրողութիւնները: Սակայն նա չունի այն լայն աշխարհայեցողութիւնը, որ անհրաժեշտ է իրերի ճիշտ լուսաբանութեան համար: Որպէս նեղհայեաց կրօնաւոր՝ Փաւստոս չէ հասկանում ոչ պատմական իրողութիւնների ուժեղական հետեւակցութիւնը, ոչ մարդկային գործողութիւնների հոգեբանական կապակցութիւնը: Յաջողութիւնները եւ ձախորդութիւնները պատմութեան մէջ նա բացատրում է մի միայն որպէս երկնառաք վարձատրութիւն կամ պատուհաս մարդկանց գործերի համեմատ:

« Գիտէ (Աստուած) զչափ արարածոց իւրոց գործոց, եւ ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա », — ահա այն առաջնորդող գաղափարը, որ կարմիր թելը պէս անցնում է նրա ամբողջ պատմութեան միջով: Բարի եւ առաքինի մարդկանց վրայ Աստուած առատապէս թափում է իր շնորհքները: Այս պատճառով Յուսիկ, Գանիէլ, Ներսէս, Մուշեղ, Մանուէլ, . . . օժտւած են գերբնական ձիրքերով: Իսկ ընդհակառակը, մեղաւորներից Աստուած դարձնում է երեսը: Եթէ Մաղքեթաց Սանէսան թագաւորը յաղթեցաւ հայերի դէմ՝ իր միջոցով պատերազմում, այդ վերին տնօրինութեան գործն էր, որ կամեցաւ վրէժխնդիր լինել նրանից սուրբ Գրիգորի սպանութեան համար: Իրանց զեղիս կենցաղավարութիւնն էր պատճառ, որ Պապ եւ Աթանազիոսն յանկարծակի Աստուծոյ հրեշտակի ձեռով սպանւեցան: Տիրանին Աստուած մատնում է թշնամիների ձեռը, որ նրանք զրկեն թագաւորին իր երկու լուսաւոր աչքերից, ինչպէս որ նա զրկել էր Հայաստանը երկու լուսաւոր վարդապետներից . . . :

Փաւստոսի աղբիւրներով եւ տեսակէտով պայմանաւորում է Բուզանդարանի պատմական արժեքը: Գլխաւորապէս բերանացի աւանդութիւնների վրայ հիմնւած եւ կղերական հոգւով լուսաբանւած, այդ պատմութիւնը ներկայացնում է բազմաթիւ անճշտութիւններ, չափազանցութիւններ, ժամանակագրական սխալներ . . . : Միտք չունենալով կէտ առ կէտ քննադատել մեր պատմիչին, բաւականանալ մի քանի օրինակներով: Փաւստոս պատմում է, թէ մի ձիու պատճառով պատերազմ սկսեց Տիրանի եւ Պարսից Ներսէս թագաւորի միջեւ: Երբ յաղթեց Տիրանը գերի ընկաւ պարսիկների ձեռը, հայերը դիմեցին Ղաղէս կայսրի օգնութեան: Ղաղէսն ահաբեկ զօրքով եկաւ, բանակ դրեց Սատաղ քաղաքի մտ եւ մի գիշեր Արշաւիր Վամարականի եւ Անդովկ Սիւնու հետ, շինականի շոր հագած, կաղամբավաճառի պատրուակով մտաւ Ոսխայ գիւղը, որտեղ գտնւում էր թշնամիների բանակը, լաւ զննեց նրանց ուժերը եւ վերագառնալով իր բանակը, ցերեկով յանկարծակի յար-

ձակեց պարսիկների վրայ: Հոսմայեցիները բոլորին կոտորեցին, գերի առին Ներսէսի կանանց իրանց գանձերով, եւ միայն թագաւորը կարողացաւ մի ձիով փախչել իր սահմանները: Քիչ ժամանակից յետոյ, երբ պարսից թագաւորը վերագարձրեց Տիրանին եւ հայոց գերիներին, Ղաղէս պատուով ուղարկեց Պարսկաստան Ներսէսի կանանց եւ մնացեալ պարսիկ գերիներին ¹:

Բացի ակնյայտնի չափազանցութիւնից, այս պատմութիւնը ներկայացնում է տարօրինակ անսխրոճիզմ: Յիշեալ երեք վեհապետների՝ Ներսէսի, Տիրանի եւ Ղաղէսի թագաւորութեան տարիները բոլորովին տարբեր են: Առաջինը թագաւորել է 294-ից մինչեւ 303 թիւը, ուրեմն Տրդատի ժամանակակիցն է եղել, իսկ վերջինը 364-ից մինչեւ 378-ը, երբ յաջորդաբար թագաւորեցին Արշակ, Պապ եւ Ղարաղբատ: Ճիշտ է, որ հոսմայեցոց կայսրներից մէկը յաղթելով Ներսէսին, գերի տարաւ ի միջի այլոց եւ նրա կանանց, սակայն այդ ոչ թէ Ղաղէսն էր, այլ Գիողեւտիանոս:

Փաւստոսի ասելով՝ Ղաղէս կայսրը մեծն Ներսէսին արտօրեց մի անապատ կղզի, որտեղ նա մնաց ինը տարի, մինչեւ կայսրի մահը ²: — Այդ անկարելի է, որովհետեւ Ներսէս մեռաւ Ղաղէսից շատ առաջ, Գրեգոր 374 թիւին:

Մեր պատմիչը աւանդում է թէ Ներսէս մարգարէացաւ՝ որ Արշակ թագաւորը դեռ իր կենդանութեան ժամանակ կը զօրկէր դահից եւ չարտչար մահամբ կը մեռնի օտարութեան մէջ ³: — Ի հարկէ Արշակի գերութեան եւ մահան հանգամանքները իմանալուց յետոյ, դժւար չէր Ներսէսին վերագրել այդպիսի գուշակութիւն:

Բուզանդ պատմում է որ Ներսէսի կաթողիկոսութեան ժամանակ Արշակ ամուսնացաւ իր սպանած եղբորորդու կնոջ՝ Փառանձեմի հետ: Բայց տեսնելով՝ որ վերջինը իրան չէ սիրում, նա ստակեց Ոլիմպիադի հետ, որ էր « ի

¹ III, 20, 21:

² IV, 6, 13:

³ IV 15:

կայսերական տոհմէն ազգաւ ։ Ըստ Ամփանոս Մարկելլինոսի 360 թւին էր՝ որ Կոստանդիոս կայսրը տւեց Արշակին Աբլաւիոս թիկնապահապետի աղջկան՝ Ոլլմայիարին, որ իր հանգուցեալ Կոստաս եղբօր նշանածն էր¹։ Եթէ Արշակ 360 թւից առաջ է ամուսնացած եղել Փառանձեմի հետ, Ներսէս այդ ժամանակ կաթողիկոս լինել չէր կարող, եթէ միայն սխալ չէ մեր պատմիչի վկայութիւնը՝ թէ Ներսէս հայրապետ օծւեցաւ Եւսեբիոսի² արքեպիսկոպոսութեան ժամանակ (362 — 370)։

Պապի վերանորոգութիւնների մէջ Փաւստոս տեսնում է միայն կոյր ատելութիւն դէպի Ներսէսի յիշատակը³, ամենեւին չը հասկանալով՝ որ երիտասարդ թագաւորը աւելի ղեկավարում էր պետական ինտերէսների գիտակցութիւնով, եւ որ նրա նորմուծութիւններից շատերը բարերար արդիւնքներ ունեցան։

Փաւստոսի ասելով՝ Տերենդն էր, որ խնձոյքի հրաւիրելով Պապին, սպանել տւեց նրան⁴, — այն ինչ Ամփանոս Մարկելլինոս այդ հրաւերը Տրայանոսին է վերագրում։

Մենք էլ չենք խօսում Բուզանդի այն պատմութիւնների մասին, որոնց լեզբնդական բնաւորութիւնը ակնբեր է ամէն մի չը նախապաշարած ընթերցողի համար։ Այս կարգից են յաղթութեան այն հրաշքները, որոնցով լին Եւսեբիոսներին նւիրած էջերը, այն զըշքը՝ իբր թէ Պապի Մամիկոնեաններին նւիրած էջերը՝ օձերի կերպարանքով, այն աւանդութիւնը՝ թէ Շապուհ պարսից թագաւորը Արշակի հաւատարմութիւնը փորձելու համար, մոգերի խորհրդով ճեմեց նրա հետ իր վրանում, որի յատակի մի մասը ծածկւած էր պարսից հողով, միւս մասը հայոց, եւ անթիւ ուրիշ առասպելներ եւ անեկզօտներ, որոնց յիշատակութիւնը շատ հեռու կը տանէր մեզ⁵։

¹ Amm. Mare. XX, 11.

² IV, 4.

³ V, 3.

⁴ V, 32. Amm. Mare. XXX, 1.

⁵ III, 3, 10, 14. IV, 4, 8, 9, 10, 20, 22, 25—49, 54, 55. V, 22.

Կարծում ենք՝ այս համառօտ տեսութիւնովն էլ դաշտի տւելնք ընթերցողին Բուզանդարանի ստուգութեան աստիճանի մասին, ուստի իրաւունք ունինք ասելու՝ որպէս պատմութիւն, Փաւստոսի երկասիրութիւնը չէ դիմանում լուրջ կրիտիկայի։

V.

ՓԱՒՍՏՈՍԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Սակայն որքան էլ անգոհացուցիչ լինի Փաւստոս, որպէս պատմիչ, այնու ամենայնիւ նրա երկասիրութեան ընդհանուր նշանակութիւնը անժխտելի է։ Չորրորդ դարու հայոց պատմութեան սակաւթիւ աղբիւրների մէջ Բուզանդարանին, որպէս ժամանակակցի յիշատակարանի, անտարակոյս ամենապատուաւոր տեղն է պատկանում։ Ոչ դք այնքան մանրամասն եւ այնքան բազմակողմանի տեղեկութիւններ չէ տալիս այն ժամանակի մասին, որքան մեր պատմիչը։ Մեր նախնեաց հաւատալիքների եւ սովորութիւնների ուսումնասիրութիւնը, նախարարների՝ փոխադարձ եւ կենդրոնական իշխանութեան հետ ունեցած յարաբերութիւնների որոշումը, մեր սկզբնական եկեղեցու վիճակի պարզելը, — բոլոր այս եւ սրանց հետ կապւած խնդիրների բացատրութիւնը գրեթէ անհնարին է առանց Բուզանդարանի օգնութեան։ Փաւստոսի պատմութեան նշանակութիւնը աւելի բարձրանում է մեր աչքում այն հանգամանքի շնորհով՝ որ Խորենացին եւ Մեսրոպ Կրէց, որոնք ամենից աւելի են շոշափել Փաւստոսի դարը, համարեա ոչինչ նոր բան չեն աւելացնում նրա պատմածների վրայ։

Հետաքրքրական է՝ որ Խորենյ ծերունին, որ այնքան սիրում է իր աղբիւրները յիշատակել, դանց է առնում աւանդելու թէ որտեղից է քաղել իր երրորդ գրքում հաղորդած տեղեկութիւնները։ Ճշմարիտ է, իր երկրորդ գրքի 2. գլխի մէջ նա յիշում է Խոռոհբուտ անունով մէկին, որ «պատմադրեաց զգործս Շապուհ եւ Յուլիանոս», ուստի կարելի է ենթադրել որ Խոռոհբուտի աշխատութիւնը եղել է նրա երրորդ գրքի աղբիւրը, — սակայն ի հարկէ, դրանով բաւականա՞յլ չէր

կարող Տրդատի յաջորդների ժամանակի պատմագիրը, ուստի պէտք էր որոնել ուրիշ աղբիւրներ էլ: Մեզ թւում է թէ այդ աղբիւրներից ամենանշանաւորը եղել է Բուզանդի երկր, որի մասին քերթողհայրը մեզ անյայտ պատճառով, լռութիւն է պահպանում: Սակայն մեր կասկածը բաւական հիմնաւոր է: Նախ, կարծում ենք պատահական զուգադիպութիւն չէ, որ թէ Փաւստոս եւ թէ Խորենացին նոր գիրք են սկսում Խոսրով Կոտակի թագաւորութիւնից, այն ինչ աւելի բնական էր քրիստոնէութեան մուտքի պատմութիւնն ընտրել, որպէս սկիզբն նոր շրջանի: Երկրորդ, իր երրորդ գրքի առաջին գլխի մէջ Խոստանալով պատմել «հասարակաց խօսիւք», Խորենացին աւելի ոյժ է տալիս մեր տարակուսանքին՝ թէ նա ձեռքի տակ ունի Փաւստոսի երկասիրութիւնը, որ ինչպէս յայտնի է, գրեած է «հասարակաց խօսիւք»: Արջապէս մեր կասկածը համոզմունքի է փոխում, երբ տեսնում ենք որ նա շատ բան Բուզանդի նման է պատմում, չը նայելով որ աշխատում է ազատ մնալ նրա ազդեցութիւնից, երբեմն նամակներ շարատարելով, երբեմն իր կարգացած գրքերից բանաբարովութիւններ անելով, եւ միշտ — «քանզի ոչ է պատմութիւնն ճշմարիտ անանց ժամանակագրութեան» — թւական ցուցմունքներ ներկայացնելով: Ահա մի քանի հատուածներ էլ որոնցով որոշում են քերթողհայրը՝ Փաւստոսից արած փոխառութիւնները:

Փ—որոք

Կապեցին . . . զմանուկն Գրիգորիս զարեւոյ ձիոյն, եւ արձակեցին ընդ ծովեզերն զաշտին հիւսիսական ծովուն մեծի . . . ի զաշտին Վատնեայ: Եւ այսպէս սպանին . . . : Եւ ապա բարձին զնա . . . եւ բերին . . . ի Հարանդ, ի դեօղն . . . Ամարազ (III, 6):

Տայր հրաման (Տիրան) խեղդամահ առնել զնա (զԳանիէլ) (III, 14):

Հրամայէր յամենայն աշխարհս եւ ի զաւառս . . . ի խորշս ի խորշս . . . յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղբատանոցս . . . (IV, 4):

Եւ սկսաւ ընկենուլ . . . ձուկն սաստիկ յոյժ . . . կերակրեալ լինէին ի ծովէ անտի (IV, 6):

Թէ . . . որ . . . եկեացէ յայն տեղի, զատ եւ իրաւունք մի լիցին:

Փորովեցան . . . գողք . . . սպանողք . . . վնասակարք . . . բազում արք . . . զայլոյ կանայս առեալ՝ անոր անկանէին, բազում ծառայք . . . փախուցեալք անոր անկանէին, բազում անգրատք . . . անոր անկանէին (IV, 12):

Խորենացի

Սպանին զերանելին (Գրիգորիս) ընթացրեալ ձի վրէ բարբարոսքն ի Վասիական զաշտին, մերձ ի կասրիականն կոչեցեալ ծով: Չոր բարձրեալ ասրկաւագաց նորուն, բերելով ի Փորք Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի (III, 3):

Հրամայեաց (Տիրան) զնա (զԳանիէլ) խեղդամահ առնել (III, 14):

Հրամայեալ ըստ գաւառաց գաւառաց շինել աղբատանոցս ի խորշս եւ ի գերծ տեղիս . . . (III, 20):

Կերակրեալ լինին . . . ի ձրկանց, զօր ծովն ընկենայր (III, 30):

Որ որ անկեալ անոր ընկեացէ, մի լիցի ի վերայ նորա իրաւունք զատաստանի . . . :

Աւանդատք եւ պարտականք եւ ծառայք եւ վնասակարք եւ գողք եւ սպանողք եւ կնահանք եւ այլ սյսպիտիք փախուցեալք անոր անկանէին (III, 27):

Իսկ թագաւորն Պապ եւ պիսկոպոսպետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն, եւ սուրբն Ներսէս զբազուկն հանապազատարած համարեալ յերկինս . . . (IV, 4):

Ինչ վերաբերում է Մեսրոպ երեցին, մենք կարծում ենք որ այդ երկասիրութիւնը մի սիրուն կոմպիլացիա է զանազան գրքերից: Անտեղի համարելով կանգ առնել այստեղ նրա աղբիւրների քննութեան վրայ, մենք այն միայն դիտել կը տանք, որ Վայոց-Չորեցի քահանան արտագրել է Բուզանդարանից ամբողջ հատուածներ, գրեթէ բառ առ բառ: Մեր խօսքը հաստատելու համար մէջ կը բերենք միայն մի, բայց ազդու օրինակ:

Փ—որոք

Մե—րոպ

Երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսելանն, եւ ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի երկնչիք զի լուա Տէր աղօթից քոց, եւ ահա ծնցի ի բո զաւակացդ այլ զաւակ: Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ, եւ խաղաղութիւն բազում եւ շնուութիւն եւ հաստատութիւն բազում եկեղեցեաց ի Տեառնէ նոցատացի, եւ բազում մոլեալք գարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում լեզուօք փառաբեցի նորօք, որք սինք եկեղեցեաց լինիցին, եւ մատակարար բանին կենաց . . . : Եւ բազում սունկք պողարեբք եւ շայեկանք եւ օգտակարք ի հոգեւոր գրախտին ի նոցա մշակութեանն աւջն անկեցին եւ ընկացին զօրհնութիւն յԱստուծոյ . . . :

Արդ իրբեւ ետես մեծն Ներսէս զայս ամենայն, եւ նա ի կատար լերինն Նպատայ. եւ ամբարձ զձեռս իւր յերկինս . . . (III, 37):

¹ Ինքը Մեսրոպ ասում է. «Գաղկաբաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց» : «Արեւելից գիրք» արդեօք որ եւ է մատենանի վերնագիր է: «Արեւելից գիրք» արդեօք որ եւ է մատենաւ յԱրարհամ խոստովանողէ, մինչ բանտարեալ կայր ի Պարսիկս, ի պարսիկ լեզուէ, այս մակագրութիւնով մի գրքի անուն է տալիս հ. Գ. Չարբանախանը իր «Հայոց Գրարութեան պատմութիւն» երկասիրութեան մէջ: Եթէ այդ Մարութայի աշխատութեան թարգմանութիւնն է, որ ծանօթ է եղել եւ թօմաս Արժրուհուն է որի մի մարջ հրատարակած է «Սոփեբք» ի. հատորի մէջ, կարծում ենք՝ Մեսրոպ երեցի խօսքը այդ գրքի մասին չէ: Մոտեն կաղանկատուացին, որքան յիշում ենք, մի տեղ ասում է թէ «գտանին զըզցք արեւելից կողմանց, զոր ոչ է արկեալ ի դեր հնադիր պատմագրաց»: Արդեօք այդ գրքի վրայ է ակնարկում Մեսրոպը: — Չս գիտենք, բայց բացայայտ տեսնում ենք՝ որ նա օգտուել է ոչ թէ մի, այլ մի քանի աղբիւրներից, զլուարտապէս Փաւստոսից:

* Այլ օրինակ ի մտադարձս որդարութեան:

Բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ յանարժանացն . այլ կացցին ի հաւատս անշարժ իբրեւ զվէմ . . . : Եւ յետ նոցա թագաւորեցէ սուռթիւն, յապարասան յանձնասէր յարծաթասէր ի մտախար յանպատուարան յանպիտան ի սուտակ եւ ի բանասրիւո մարդկանէ . եւ ապա եթէ որ գտցի՝ որ եւ արասցէ ունել զուխտ հաստատութեան հաւատոյ, հազիւ հազիւ : Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, միթիթարութեամբ մեծաւ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, որ արժանի արար զնա սյուպիս յայտնութեան պատասխանոյն (III, 5) :

պատուիրանին . եւ կացցեն անշարժ իբրեւ զվէմ : Եւ յետ նոցա անցանելոյն թագաւորեցէ սուռթիւն յապարասան եւ յանձնասէր եւ յարծաթասէր եւ ի ստաբան եւ յանպիտան եւ ի բանասրիւո մարդկանէ . ապա թէ կարասցէ որ զտան (զուխտոյ?) ի հաստատութեան ունել, հազիւ ըստ ժամանակին չարութեան : Չայս ամենայն լուեալ Յուսիկն ի հրեշտակէն՝ միթիթարէր յոյժ եւ գոհանայր զՏեառնէ՝ որ արժանի արար զնա այնպիսի յայտնութեան : (« Սոփերք Հայկականք », հ. 2, էջ 12—13 :)

Բաւական չէ այդ . Բուզանդարանը մեծապէս նպաստում է մեր հին գրականութեան քննական ուսումնասիրութեան գործին : Է. Յ. Գաթրըճեանը մատնացոյց է անում ¹ որ Փաւստոսի երկասիրութեան մեջ կան ս. Բարսղի պատարագամատոյցից հանած հատուածներ, որոնց հիման վրայ ի միջի այլոց կարելի է վերատուգել այդ գրածի հայկական տեքստը : Անօգուտ չի լինիլ Բուզանդարանը եւ Ս. Գրքի, Ագաթանգեղի, Կորիւնի եւ Մեսրոպ երեցի բնագիրները ուսումնասիրելիս, թէ եւ պէտք է ասել՝ որ վերջիններն էլ կարող են ծառայել Փաւստոսի մեզ հասած տեքստը ուղղագրելու : Բայց մանաւանդ մեծ է մեր պատմիչի նշանակութիւնը չորրորդ դարու հայոց պատմութեան եւ ժամանակագրութեան քննութեան համար : Բանն այն է՝ որ որքան եւ առասպելխառն է Փաւստոսի պատմութիւնը, որքան էլ խոշոր ժամանակագրական վրիպակներ է ներկայացնում նա, այնու ամենայնիւ նրա զրոյցներից շատերը, — Խորենացու լեզուով խօսելով, — « զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ », այնպէս որ կրիտիկոսը հեշտութեամբ կարող է նրա տւած տեղեկութիւնները զուգարել ուրիշ տեղեկութիւնների հետ, եւ որոշելով հաստատին երկբայականից, իրողութիւնը առասպելից, կազմել

¹ « Հանդէս Ամսօրեայ », 1889 թ. N° 3, էջ 43 :

մտաւորապէս ճիշտ գաղափար այն դարում Հայաստանի մէջ կատարած նշանաւոր գործերի մասին :

Այս տեսակէտից, Բուզանդարանը Ամիսնոս Մարկելլինոսի եւ մի քանի ուրիշ հոսովեական եւ յունական աշխատութիւնների հետ, թանկագին աղբիւր է Խորենացու երրորդ գիրքը քննադատելու, որ ինչպէս յայտնի է, ներկայացնում է մեր պատմիչի գրեթէ բոլոր թերութիւնները ¹, առանց ունենալու նրա արժանաւորութիւնը :

Փաւստոսի երկասիրութիւնը տալիս է մեզ մի քանի տեղեկութիւններ եւ մեր հեթանոսական պատմութեան վերաբերեալ : Այս կարգից են այն աւանդութիւնները, թէ Տիգրան Պաղեստինից բերեց բազմաթիւ հրեայ գերիներ, որոնց բնակեցրեց Հայաստանի զանազան քաղաքներում, թէ Աեսարիան եւ Եդեսիան երբեմն հայերին են եղել, թէ Մամիկոնեան տոհմը ճենական ծագումն ունի, թէ Բագրատունիք թագակապ սպասներ էին Արշակունեաց իշխանութեան սկզբնաւորութեան ժամանակից եւ այլն : Այս մեզ ծանօթ տեղեկութիւնների նշանակութիւնը կայանում է այն բանի մէջ, որ դրանք հաստատում են քերթողահօր վկայութիւնները : Սակայն Փաւստոսի գրքում գտնում ենք նախնական շրջանին վերաբերեալ եւ այնպիսի տեղեկութիւններ, որ չ'ունի Խորենացին, — ուստի դրանք կարօտ են առանձին ուշագրութեան : Այսպէս օրինակ, նորութեան չափ հետաքրքրական են մեզ համար հեթանոս հայերի ներքին կեանքի մասին արած հարեւանցի նկատողութիւնները ², որ պարունակում են թանկագին նիւթեր հայկական էթնօգրաֆիայի համար :

¹ Օրինակի համար հա մի երկու նմուշ Խորենացու ժամանակագրութիւնից : Խորոզմ Արտակին նա համարում է Արմզդի (303—309) եւ Արտատնտի (337—361) ժամանակակից : Տիրանին թագաւոր է կարծում Յուլիանոս կայսրի օրերով, այն ինչ այդ ժամանակ Արշակն էր թագաւորում : Վաղէսի թագաւորութեան միջոցին սպանւած Պապին նա բազմացնում է հայոց գահի վրայ մեծն Թեոդոսի հրամանով, իսկ Պապից անալ վախճանւած Երեսեան ուղարկում է Ա. Պլոլի ժողովը : Բայց, զորն ասեմ կամ զորն խոստովանիմ . . . :

² IV, 4, 15, 44. V, 43 եւ այլն : Տես նոյնպէս « Ծրագիր հայ ազգագրութեան », Գր. Խալաթեան . էջ 27, 35—36 :

որ եւ է աշխարհագրական անուն յիշելիս, Փաւստոս ոչ միայն ճշտութեամբ որոշում է տեղը, այլ եւ երբեմն յիշեցնում է այդ անւան հետ կապւած պատմական իրողութիւնը¹: Այսպիսով, Բուզանդարանը՝ գնահատելի աղբիւր է նաեւ Հայաստանի աշխարհագրութեան: Արեւմտեայէս, որպէս գրականական վաստակ Փաւստոսի երկասիրութիւնը իր բոլոր թերութիւններով հանդերձ, արժանի է ուսումնասիրութեան: Ճշմարիտ է, նրա գործի մէջ չէ պահպանւած խիստ համակարգութիւն, պատմութիւնը շատ դանդաղ է առաջ գնում: Երբեմն թուում է թէ հեղինակը բառերի կուտակութեամբ կամենում է ծածկել մտքի աղքատութիւնը: Ահռուն որ մի ընտիր՝ բայց եւ այնպէս խառնուրդ է ռամկական եւ կլասիկական ոճի, չ'ունի այն պարզ լրգիկական կատարելութիւնը, որ մեր ոսկեդարեան մատենագրութեան գլխաւոր յատկանիշն է: Սակայն այդ պակասութիւնները, որոնց մի մասը անտարակոյս պէտք է վերագրել թարգմանչին կամ ընդօրինակողներին, սուեր չեն ձգում Փաւստոսի դիտելու ընդունակութեան եւ նկարչական ձիրքի վրայ: Արդարեւ, Փաւստոս չ'ունի ո՛չ Եղիշէի եւ ո՛չ Խորենացու գեղարւեստական տաղանդը: Կա ոչ հոգեբան-բանաստեղծ է առաջնի պէս, ոչ ճարտասան նկարիչ՝ վերջնի նման: Բանաստեղծական նկարագրութիւններ, հռետորական փայլուն ասացւածներ մի՛ որոնք Բուզանդարանում: Փաւստոսի նկարչական զօրութիւնը կայանում է այն անխնայ ուշաքիզի մէջ, որ երբեմն անտես անելով պատշաճի պահանջները, կարմրեցնում էր հինգերորդ դարու երկիւղած հայ ընթերցողներին: Պատմելով ամէն տեսակ մանրամասնութիւններ, Բուզանդ պատկերացնում է իրողութիւնը իր բու-

¹ Օրինակ. «Եւ յաճախ յակն աղբերն ի ներքոյ սարաբարձը մեհէնատեղոյն Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերին մեծի՝ որում Յուն անուանեալ կարդան, ի բագնին տեղոջէ ի բացագոյն իբրեւ քարընգէց մի ի ներքոյ կուսէ, ի դոյցն ծործորակին ի սակաւ անտառակին ի հացուս պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն: Այս այն աղբիւրն է, յորում առներ յայնժամ եւս վաղ մեծն Գրիգոր զվկրտութիւնսն զբրացն բազմաց: Յայնժամ տեղով էր սորա կայեանք խցկան սրբոյն Գրանիւրի:», (III, 14:)

վանդակ անպաճոյճ մերկութեան մէջ: Չեր առաջից կարծես անցնում են մի շարք կենդանի պատմական գործիչներ իրանց որոշ ֆիզիկական եւ բարոյական կերպարանքով: Մի եւ նոյն ժամանակ դուք անդադար զգում էք որ պատմիչը ժամանակակից¹ է եւ սուր աչքի եւ նուրբ խելքի տէր մարդ: Առանց չափազանցութեան կարելի է ասել որ այնպիսի կենդանի տեսարաններ, որպիսի են օրինակ, Աշտիշատում Ներսէսի եւ հայր մարգարտի միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնը, Փառանձեմի սուգը կամ Աիւղակ մարդպետի, Ներսէսի, Պապի եւ Մուշեղ Մամիկոնեանի ողբերգական մահւան նկարագիրները², չ'ունին իրենց հաւասարը մեր գրականութեան մէջ:

Փաւստոսի գրականական տաղանդի մասին ընթերցողին մտաւոր գաղափար տալու համար դնում ենք այստեղ Պապի մահւան պատմութիւնը:

«Ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կուցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կուցել, եւ առնէին կազմութիւն պատրաստութեան: Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել եւ յըմբել: Եւ իբրեւ մտաներ արքայն ի խորանն Տերէնդի զօրավարին Յունաց, եւ լեզէնն սպարակիր հետեւակն վահան ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զօրմովք խորանին պատեալ պսակէին, սոյնպէս եւ արտաքոյ կազմէին ի ներքոյ կուս վառեալք, եւ ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: Եւ մինչդեռ յընթրիսն ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ իբրեւ ընդ զինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուազն մատուցին արքային Պապայ, եւ առ հասարակ թմբկահարք եւ սրնահարք քնարահարք եւ փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւ բարառեցան: Եւ վահանաւոր լեզէնին հրաման ետուն, եւ մինչդեռ թագաւորն Պապ զուրախութեան զինին ունէր ի մատունս իւր, եւ նայէր ընդ պէսպէս ամբոխ զուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, եւ մինչդեռ բերանն ի բաժակին էր յըմ:

¹ Միայն ժամանակակիցը կամ ականատեսը կարող էր գրել թէ «ինն ժամ առաւր կուցեցին զՊապին» (V, 6) կամ «սկսաւ (Ներսէս) զարիւնն հոգեւոր հոռնիք ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրեւ զերկուս ժամս:», (V, 24:)

² IV, 14, 15. V, 6, 24, 32, 35:

պէն, եւ աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայեր ընդ պէսպէս
ամբոխս գուտանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յու-
նաց: Իւր լեզէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուտէ կային ի
սպասու ոսկիկմբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ
դսակուրան, զարկանէին թագաւորին Պապայ: մին կշիւ գուրն
հարկանէր սակրաւն, եւ միւսն եւս սակրաւորն զաջ թաթ
ձեռինն որ կայր ի վերոյ դաստապանին նրանին հարկանէր:
կտրէր եւ ի բաց ընդենոյր: Անդէն ի բերանս տապալէր թա-
գաւորն Պապ, եւ գինին տաշտիւն եւ արիւնն պարանոցին նո-
վաւ հանդերձ ի վերայ բաժակալ (բաժակակալ) սկըտեղն ան-
կանէր առ հասարակ եւ անդէն սատակէր թագաւորն Պապ:»

Ոչ պակաս գեղեցիկ են Բուզանդարանի այն էջերը,
որոնց վրայ արձանագրւած են ժողովրդական զրոյցներ: Բացի
իրանց ներքին արժանաւորութիւնից, նրանք այն առաւելու-
թիւնն ունին, որ շատ տեղ ներկայացնում են մեզ ժամա-
նակակից աշխարհիկ լեզւի բառերը, ձեւերը եւ նոյն իսկ
բաղդասութիւնը: Սակայն մենք կանգ չենք առնիլ այս խնդրի
վրայ, որ հիմնաւորապէս ուսումնասիրւած է Տ. Ա. Այտըն-
եանի «Քննական քերականութեան» Նախաշարքէ մէջ:

Մեզ մնում է յայտնել անկեղծ ցանկութիւն որ «ան-
համեմատն ի պատմագիրս մեր եւ քան զբաղումս արդարա-
լսօսն» Փաւստոս, ինչպէս մեր պատմագրին անւանում է
Ք. Պատկանեան, արժանանայ մեր թղլ փորձից աւելի լուրջ
եւ հիմնաւոր հետազօտութիւնների: Եւ այդ կը լինի մեր աշ-
խատութեան լաւագոյն վարձատրութիւնը:



« Ազգային գրադարան



NL0367384

